

# ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԿԱՆԹԵՂԸ... ԼՈՒՅՍ Է ՏՄԼԻՍ ԵՐԿԱ Ր ԴԱՐԵՐ

Աչք ու աչքի լույս ունես, հոգի ու լեզու ունես, նայիր քո՝ աշխարհին ու ասա՝ մեզ էսքան սիրո՞ւն-շարմաղ, սիրառատ, ծաղկառատ, ջրառատ սարեր տված Աստուծոց կնեղանա՞ն, որ հաճախ սրտնեղում ու նեղանում ենք, թեկուզ գիտենք՝ Աստված է, տարվել է աստվածակերտ սարերի հնայքներով, ասես բեզարել ու մի պահ աչք է փակել մեր դարդ ու ցավի դեմ: Աստծո արարածը վայելենք ու մեր ճամփան շարունակենք: Ու հենց էստեղ՝ Արագածի «ամենագրագետ» լանջը՝ դրոշմված սուրբմաշտոցյան քարակերտ տառապատկեր քանդակներով, մեկը հուշում է՝ գրերի էս պուրակից, էս տառադարանից, էս գրադարանից նայիր Արարատին, նայիր Արա լեռանը, նայիր հենց Արագածին. սա էն ոսկեխույզ կենտրոնն է, ուր պիտի բխեր մեսրոպյան այբուբենի անտառը՝ զորավոր, առնչքնորդ, սարալանջաբորժի: Արարիչը մտածում է: Եվ կա՞, արդյոք, մի արարող, որ չի մտածում վաղվա մասին: Սուրբ Մեսրոպ Մաշտոցը՝ գրերի իր գյուտով հայությանը թևավորողը, չի՞ մտածել, արդյոք, իր գրերի ու իր ժողովրդի ապագայի մասին: Եթե միասին քայլեն՝ ամենա պիտի լինեն:



կխոյացնեն Արագածի լանջին, հենց տառերի անտառի մեջ: Սովոր ենք ասել՝ քառագագաթ Արագած: Սարաշեղջ մեր էս լեռը քանի՞-քանի բարձունք ունի: Ամեն մի սարը մի բարձունք է: Եվ էստեղ ամեն մի տառը դառնում է մի սար, մի բարձունք, դառնում է երկիր ու երկինք:

Դեռ 104 տարի առաջ է մեր մարգարեն՝ Յովհաննես Թումանյանը Արագածի լանջին վառել իր կանթեղը: Այո՛, Լուսավորչի կանթեղի մոտ՝ իր կանթեղը: Հիմա երկու կանթեղ է կախված: Լուսավորչի կանթեղն անմար ու Յովհաննես Թումանյանի կանթեղը... Ու նա եկավ, եկավ ու արձանացավ: Սարերում ծնված, Լոռու սարերով մեծացածն ու իմաստնացածը կարող էր չառնել Արարատի ու Արագածի խորհուրդը: Ամեն ինչ տեսածը իմաստուն միտքը պիտի կապեր իմ նոր հայրենիքի, Յզոր հայրենիքի հետ, Յուսի հայրենիքի, Լուսի հայրենիքի հետ: Նա հայրենիք էր կերտում ու հայրենիք էր տեսնում: Բայց կմտածե՞ր արդյոք Մենք բանաստեղծը, որ իր լռեցիները, իր գավակները տուֆակերտ իր արձանը Արագածի լույսերի մեջ կտեղադրեն՝ սուրբմեսրոպյան գրերի բուրմունքների մեջ, Անանիա Շիրակացու մոտ: Հետո՞ շատերը կգան: Ամեն մարդ, հայոց ամեն շրջան իր մեծին կբերի էստեղ: Էս մի կտոր ծաղկոտ հացը, որ վայելում ենք էստեղ, մյուս հանդիպման ժամանակ հացը կբարձրանա վեր, իսկ էս սեղանի տեղը մի նոր արձան կդրվի: Էսպես՝ տարիների, տասնամյակների ընթացքում մի կտոր

անուշ հացը կբարձրանա Արագածի լանջն ի վեր, և հայ ժողովրդի ապագայակերտ ու հայրենիքակերտ գավակների արձանները կգարդարեն Արագածի գեղեցիկ, գեղեցիկ, գեղեցիկ, աննման, ծաղկառատ, ջրահամ կուրծքը: Ու ամեն անցորդ կզգա, որ բարձրանում է մեր քառագագաթը դեպի երկինք, դեպի հավերժություն: Ու մենք, Թումանյանի ասած, դարեր են գալի՝ մենք միշտ հավատով, մենք միշտ աննկուն:

Օր, Արագած սարին նվիրված նվիրական օր: Արագածը միշտ էլ գեղեցիկ է: Բայց ե՞րբ է էսքան գեղեցիկ եղել: Օրը գեղեցիկ է, երբ իր մեջ դարեր ու դարերի պատմություն է պահում: Մերձակա շրջաններից, գյուղերից, Թումանյանի աշխարհից եկածներն օրն ավելի են գեղեցիկ դարձնում, բայց օրը գեղեցիկ է հենց Արագածով ու Ապարանի ժողովրդով: Եվ երգն է հնչում, և՛ պարն է թնդում: Ու ջահելությունն է ծաղկում ու բուրում: Հերն անիծած, մի պահ մոռանանք: Խայսան ու Թումանյանը կարողացել են մի պահ մոռանալ, մենք էլ մոռանանք: Աստծո տված մեր օրվա տերը լինենք ու լսենք, թե Թումանյանի աշխարհից եկած արտիստը, որ Ջիվան Սարգսյանն է, ինչպես է կարդում Սարգարեի տողերը՝ հայացքը Թումանյանի արձանին ու Արագածին.

Ով ամեն էլ, լիքը սիրով  
Ու հավատով անսահման,  
Ով նայում է վառ հույսերով  
Դեպի Հայոց ապագան,-  
Նա կըտեսնի էն մըշտավառ  
Ջահը կախված երկընթից,  
Ասես՝ Աստծո աչքը պայծառ  
Հըսկում է ցած երկընթից:

Լուսավորչի կանթեղը լույս է տալիս երկար դարեր, ու քանի կան Արագածն ու նրա գավակները՝ երկար-երկար դարեր դեռ լույս կտա: Էդ լուսի հավիտենականության համար պիտի ձգտի ապրել սարերի գավակը, ամեն քաջ հայրորդի:

ՀՐԱՅՕ

## ՀՈՎՍԵՓ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ «ԼՈՒՅՍ» ԳՐՔԻՑ

Առաջին Համահայկական համագումարը տեղի է ունեցել Երևանում 1999 թվականի սեպտեմբերին, Սփյուռքի և Հայաստանի ներկայացուցիչների մասնակցությամբ:

Առաջին մարզական Համահայկական խաղերը տեղի են ունեցել Երևանում, 1999 թվականի օգոստոսի 23-ից սեպտեմբերի 5-ը:

Հայաստանում առաջին շարժապատկերի նկարահանումը կատարվել է 1907թ.՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Խրիմյան Հայրիկի ժողովրդական հուղարկավորությունն է:

Հայկական գեղարվեստական առաջին շարժապատկեր «Նամուս»-ի ցուցադրությունը տեղի է ունեցել Երևանում, 1925 թվականի դեկտեմբերին:

Առաջին հայ բժշկուհու անունը Աղուիթա է: Նա Սուրեն Իշխանի կինն էր, որ ապրել է երրորդ դարում:

Առաջին ինքնաշարժը Հայաստան է մտել 1913 թվականին:

Առաջին հայ կին օդաչուն, որ համաշխարհային մրցանիշ է արձանագրել 1912-ին, Սոֆիա Աճեմովան է:

Առաջին հայ կինը, որ 1936թ. ստացել է հրահանգիչ-օդաչուի կոչում, Ռոզա Աբրահամյանն է:

Առաջին բաժնետիրական ընկերությունը Ռուսաստանի Մոսկվա մայրաքաղաքում կազմակերպել է հայագրի Բարսեղ Խաստուտովը, 1755 թվականին:

Առաջին արհեստավարժ (professional) հայ դերասանուհին եղել է Արուսյակ (Մարիամ) Փափազյանը:

«Վերջ Հայաստանի»-ն գրվել է 1840-ին, Թիֆլիսում: Առաջին անգամ հրատարակվել է հեղինակի անհետանալուց տասը տարի հետո, 1858-ին, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի տպարանում:

Առաջին հայը, որ ոտք է դրել Պեժմոյ հողի վրա 11-րդ դարում, եղել է Մակար Եպիսկոպոսը:

Առաջին հայկական մանկապարտեզը հիմնել է Սոֆիա Պապայանը, 1882 թվականի հուլիսին, Թիֆլիսում:

Եգիպտոսի Առաջին երկշաքաթերթը՝ Արմավենի, հրատարակվել է Կահիրե մայրաքաղաքում 1865-ին:

# Հնագիտական պեղումները Թագավորանիստում կտևեն 6 ամիս



Լոռու մարզպետարանի և Վանաձորի քաղաքապետարանի նախաձեռնությամբ մայիսի 10-ին մարզկենտրոնի Թագավորանիստ տեղանքում սկսվեցին հնագիտական պեղումները, ինչը մեր ազգային ժառանգությունն աշխարհին ցույց տալու նպատակ ունի: Այս կապակցությամբ պայմանագիր են կնքել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հետ՝ աշխատանքը կազմակերպելու համար կադրեր տրամադրելու նպատակով: Արշավախմբի պետը պատմական գիտությունների դոկտոր Ռուբեն Բաղայանն է: Նա մեր այցի ժամանակ կազմակերպչական հարցերով երևան էր մեկնել, և «Լոռու մարզը» պեղումներն սկսելու առիթով գրուցեց հնագիտության և ազգագրության ինստիտուտի վաղ հնագիտության բաժնի վարիչ Պավել Ավետիսյանի հետ: «Գործնականում երեկ ենք սկսել պեղումները: Նախատեսված էր մայիսի հենց սկզբից, բայց անձրևային եղանակի պատճառով այն փորձինչ հետաձգվեց: Պեղումները կշարունակվեն 6 ամիս. դա աննախադեպ երևույթ է Հայաստանի համար, որ մեկ հուշարձանի վրա պեղումներն այդքան երկար ընթացք ունենան: Աննախադեպ է նաև այն առումով, որ չեն հիշում նման օրինակ, երբ մարզպետարանը, քաղաքապետարանն այսպիսի գործ ձեռնարկեն: Իսկ պատմությունը վեր հանելու համաժողովրդական այս գործում գիտնականի հնարավորությունները շատ քիչ են. պետական հովանավորություն է պետք», - գնահատանքով նշեց Պ. Ավետիսյանը և հավելեց, որ իրենք այս կարևոր նախաձեռնությունը կօգտագործեն նաև, այսպես

բանադաշտն է եղել, որևէ այլ աշխատանք չի կատարվել: «Մենք այս աշխատանքով ուզում ենք լուծել ո՛չ միայն Թագավորանիստի հետ կապված մեր գիտական խնդիրները, այլ նաև Լոռու մարզում հնագիտության ինստիտուտը վերջապես կունենա գործող արշավախումբ: Կհամագործակցենք Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարանի հետ, որպեսզի այստեղ միշտ հնագետի աչք լինի, հնագիտական աշխատանքները շարունակական լինեն», - ասաց Պ. Ավետիսյանը: Այն հարցին, թե ինչ ակնկալիքներ կան պեղումներից, հնագետը պատասխանեց, որ Թագավորանիստը պատահական հուշարձան չէ, տարբեր տարիներին՝ անցած դարի 60-ականներին, 30-ականներին, նաև ավելի վաղ անցյալում այստեղ կատարվել են պեղումներ, հետախուզական աշխատանքներ, և բազմիցս հայտարարվել է, որ Թագավորանիստը Հայաստանի, ընդհանրապես՝ նախկին տերմինաբանությամբ, Անդրկովկասի ամենաերևելի հուշարձաններից է ու, հետևաբար, ակնկալիքները մեծ են: «Պետք է որ այստեղ վաղ-բրոնզեդարյան մեծ բնակատեղի լինի: Ժամանակին փոքրիկ հետախուզական աշխատանքների ընթացքում, երբ հավաքել են գետներես նյութը, վերցրած նմուշներն այդ մասին են վկայում: Ակնկալիքները մեծ են, որ պեղելով՝ դիտարժան նյութեր կհայտնաբերենք այս կարևոր հուշարձանից, աշխարհին ցույց տալու բան կունենանք», - ասաց Պ. Ավետիսյանը և ավելացրեց, որ Թագավորանիստը տարեկից է երևանի վաղ-բրոնզեդարյան Շենգավիթ հուշարձանին, իսկ իր սահմաններով շատ ավելի մեծ է: Լոռու մարզպետարանի և ՀՀ ԳԱԱ հնագիտության ու ազգագրության ինստիտուտի միջև կնքված պայմանագրային պարտավորությունների կատարումը համակարգում է մարզպետի մամլո քարտուղար Էդիկ Յովսեփյանը՝ որպես Լոռու մարզպետի ներկայացուցիչ: Նրանից տեղեկացանք, որ ամռանը պեղումներին կմասնակցեն Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի պատմական ֆակուլտետի ուսանողները: Օրերս պեղումների վայր այցելեց Հայ բարեգործական ընդհանուր միության ներկայացուցիչ Յուրիեն Դուլայանը՝ Ֆրանսիայից: Նա ցանկություն հայտնեց իր աջակցությունը ցուցաբերել՝ փորձելով Ֆրանսիայից օգոստոս ամսին ուսանողների խումբ բերել՝ մեր ուսանողների հետ ուսումնական պրակտիկական անցկացնելու նպատակով: Էդիկ Յովսեփյանը տեղեկացրեց նաև, որ պեղումների արդյունքում հայտնաբերված պատմական արժեք ներկայացնող բոլոր նմուշները կհարստացնեն Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարանը: Գնահատելի է Վանաձորի քաղաքապետարանի ներդրումն այս գործում, առանց որի հնարավոր չէր լինի իրականացնել այս ծրագիրը:



ասած, «գիտական էզոիստական» առումով՝ ի նպաստ հնագիտական ինստիտուտի զարգացման: Պեղումների կարևորությունն ընդգծող մի փաստ էլ նշեց պրն. Ավետիսյանը. դա այն է, որ վերջին տասնամյակների ընթացքում Լոռու մարզի տարածքում միակ պեղվող հուշարձանը, ըստ էության, Լոռի-Քերդի դամ-



Քաղաքապետարանը համայնքային բյուջեից հատկացումներ կանի՝ հողի տեղափոխման, կոնսերվացիոն աշխատանքների և անհրաժեշտ օժանդակ նյութերի ձեռքբերման գործում: Բացի

# Վերածնվեց ամենաժողովրդականը՝ երգի տոնը Երգը իմաստավորում է և՛ քո անցյալը, և՛ քո ապագան...

Ավելի քան կես դար առաջ հիմնվեց ամենաժողովրդական համաքաղաքային տոնը՝ նվիրված երգին: Այսինքն երգը օգնեց, հուշեց, որ աշխատանքով ծնված Կիրովականը պետք է լինի նաև մշակութային ավանդություն ունեցող քաղաք:

Եվ արևով ողողված մեր քաղաքը ունեցավ իր տոնը, որը ոչ միայն երգի տոն էր, այլ նաև պատմական նոր արարումի հանրագումար: Երգի տոնը եկավ ասելու, որ կիրովականցին և՛ կառուցել գիտի, և՛ շենացնել հին պապենական հողը և գիտի նաև արարել՝ երգելով: Տարիներն ու տասնամյակները, որ մեր քաղաքի կենսագրության վառ էջերն են դարձել, բազմաթիվ խորհրդանշական անուններ են պարզել Կիրովականին. «ժողկի քաղաք», «Լոռվա գեղեցկուհի», «Երգի քաղաք»...

Ով էլ որ անցնի ավելի քան կեսդարյա ուղի, կհասունանա ու կծերանա: Բայց երգի տոն երևույթը բացառություն է. այն իր մեջ ամփոփել է ժամանակի իմաստությունը ու մնացել ջահել: Բացառություն է, քանզի իրար հաջորդող սերունդների ներկայացուցիչները միշտ էլ բերել են ու կրեն են իրենց երգն ու պարը, նոթը իրենց, որ ձուլվելով կեսդարյա ուղու վաստակին, նորից կինչեցնեն իրենց պարն ու երգը ի փառս վերածնված, դարերում հարատևող մեր հայրենիքի:

Մեր քաղաքի կիրակնօրյա զարթոնքը մեկեն դարձավ արտասովոր: Հանկարծահաս, ասես երկնքից իջնող «Իմ Վանաձոր»-ը այդ օրվա առաջին անակնկալն էր:

Վանաձորցին սիրում է երգը, և պատահական չէ, որ հենց այստեղ ծնունդ առավ ու ավանդական դարձավ «Երգի տոնը» մարդու ու ազգային մշակույթի միաձուլման վառ արգասիքը: Սա, իրոք, տոնախմբություն է, ժողովրդական տոն:

«Բոլոր քարի» շրջակայքը երգ ու պարի հրապարակ էր դարձել՝ գիրկը բացելով բոլորի առաջ, կարծես ասելով, թե տերն ես կյանքի ու արարումի: Եթե ժպիտն է քո ուղեկիցը, թե երջանիկ ես ու պայծառատես, քոնն են աշխարհը, երկինքը, կյանքն ու բնությունը այս չնաշխարհիկ. դու պետք է երգելով հաղթահարես քո դժվարությունները, չես կարող լռել:

Ամեն աշուն, երբ անտառը բազում գույների բնական խաղով սկսում էր խենթանալ, ոսկեհեր աշնան ժպտացող կանչով կիրովականցին գնում էր սոճիների պուրակ: Ու հավաքվում էին հազար-հազարով: Գալիս էին երգելու, հանրագումարի բերելով իրենց աշխատանքային նվաճումները, հաջողությունները, իրենց սերն ու երախտիքի խոսքն ասելու հայրենիքին: Եվ երգերը, հայրենիքը փառաբանող հիմները նրանց շուրթերին էին, նրանց սրտերում:

Մայիսի 28-ին էլ մի քանի ժամից ավելի ահել ու ջահել սրտերի երգն ու երաժշտությունը, որ յուրօրինակ ներքող էր բնությանն ու մարդուն, թունդ առան մարդկանց սրտերում: Մի քանի ժամյա երգն ու երաժշտությունը ներկայացվեց որպես յուրօրինակ մի երգափունջ և երդում հայրենիքին, խաղաղությանը:

Այա շուրթից-շուրթ, սրտից-սիրտ անցնող հոգեզմայլ մեղեդիները իրար կամրջեցին տոնահանդեսի բոլոր մասնակիցներին:

Որքան նման, այնքան էլ տարբեր էին իրար հաջորդող երգահանդեսները: Դրանցից յուրաքանչյուրն իր նվիրումն ուներ որևէ



հիշարժան իրադարձության: Համաքաղաքային այս տոնախմբությունը տեղի ունեցավ մի բացատում, ուր ամեն ինչ տրամադրող էր, տոնական, զարման պես թարմ ու գունեղ:

Ընդգրկուն համերգային ծրագրին իրենց մասնակցությունը բերեցին մեր քաղաքի երաժշտարվեստի բոլոր նվիրյալները, ովքեր իրենց հրաշալի ելույթներով երգի տոնը դարձրին իրողություն:

Ու հաղթանակած երկիրը, որ կռվի և երկրաշարժի պահին էլ է սերունդ երկնել, անցավ նորից իր խաղաղ առօրյային. կառուցում, վար ու ցանք, նաև երգ ու պար:

Հոսում է ժամանակը ու փոխում ամեն ինչ: Հոսում է ժամանակը՝ մոռանալով նրանց ու այն երևույթները, որոնք չեն խոսում իր հետ, չեն հասկանում իր՝ ժամանակի ոգին:

Այնուամենայնիվ, այդ օրը ոչ միայն երգի տոն էր, այլև մասսայական առողջարարական յուրատեսակ զբոսանք, ակտիվ հանգիստ, որի հաճույքը դժվար է գնահատել:

Երեկոյան տոնահանդեսի ուրախ տրամադրությունը զարման բանու պես քաղաք իջավ, մտավ օջախից-օջախ:

Մինչև ուշ երեկո շարունակվեց նաև տոնական զբոսանքը:

**Լևոն ԽԱՉԱՏՐՅԱՆ**  
**Վանաձոր – Կալուզա**

## 49

այդ՝ արշավախմբի կողմից իրականացվող պեդուլներին աշխատանքներին օժանդակելու նպատակով Վանաձորի քաղաքապետարանը տրամադրել է բանվորներ՝ «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի շրջանակներում: Այս նախաձեռնությունն իհարկե իրականություն դարձավ Լոռու մարզպետի անձնական աջակցության և ներդրման շնորհիվ: Մարզպետ Յ. Քոչինյանը նպատակ ունի հիշյալ ինստիտուտի հետ համագործակցելով՝ այս աշխատանքները շարունակական դարձնել հաջորդ երկու տարիներին: Նախաձեռնությունը ոգևորություն է առաջացրել մարզկենտրոնի բնակչության շրջանում: Արդեն կան մտավորականներ, ովքեր իրենց աջակցությունն են առաջարկում՝ գիտակցելով ազգային արժեքների հայտնաբերման, սերունդներին փոխանցելու կարևորությունը: Գնահատելի է Վանաձորի թիվ 3 հատուկ դպրոցի տնօրինության և աշխատակազմի հոգատար վերաբերմունքն արշավախմբի նկատմամբ: Արշավախմբի անդամները գոհ էին հյուրընկալությունից և աշխատանքային առաջին օրվանից: «Հյուրի նման չենք մեզ գտնում, մեզ լավ են ընդունել, խնդիրներ չունենք», - մեր գրույցի ժամանակ ասաց Պ. Ավետիսյանը:

**Արդա ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**



# ՄՈՆԱՏ ԷԴՎԱՐԴ ՄԻՐԶՈՅԱՆԻ ՀԱՄԱՐ

Մարդկային ծայրերի սիրեգր ծովում ես ի՞նչ ալ կարմիրներ, կանաչ-կապույտներ, սև-սպիտակներ են ծալք-ծալք գունեղվում, գունառվում, գունատվում ամեն պահ ու դառնում զուտ-զտարյուն անբաժան քո աշխարհը: Չայնազույն, ձայնածով աշխարհն այդ թխել-ակունքվել է հայոց վաղ միջնադարում, երբ ձայնն աղոթքի նման առ Աստված էր խնկվում... Չգա՛լ, տենչալ ու տեսանել: Իր հոգում ամեն պահ մեղեդու գույները ձայնեղվում, խաչքար-մեղեդվում, մրմնջում են որպես ծովական սիրո կարոտի կանչ, որ անվերջ թևուն-թևանում է: Մարդկային կյանքը ձայնեղություն է: Քո երկիրը փոքր է: Դու աշխարհի ես եկել, որ լսես գունավառ այդ ձայները, նորոգես քո սրտի արյունով: Քեզ մնում է միայն մի բան հասկանալ. ո՞վ է քեզ նվիրում մեղեդի՝ հո՞ղը, երկի՞նքը: Մինչև չդառնաս հին ձայների գերի՝ չես կարող դառնալ քո հույզերի, ապրումների տիրակալը: Մեծն Կոմիտասը գերի չդառնար այդ ձայներին՝ չէր կարող տիրակալ դառնալ, դաշնել, գտնել: Սուրբ Մաշտոցը դաշնավորեց մեր Այբուրենը... Ով էլ ասի՝ ԱՅՔ... նա արդեն գրակալ լեզվով իր աղոթքն է կարդում առ Աստված: Գրերի գյուտը՝ դաշնավորումը, ազգի թռիչքի մի թևն է միայն: Ճախրը չի կարող արքայական լինել մեր արքայական լեռների ու արքայական լեզվի համար, եթե... կաղում է մյուս թևը: Մի-թևանին չի ճախրում, միայն երագուն է: Կոմիտասն եկավ ու ճախրելու հավերժական իրավունք տվեց հայոց ազգի երգի թևին՝ պարզելով հաղթական շունչ ու ոգի: Մաշտոցի անվան, գործի հետ հավերժորեն պիտի նժարվի Կոմիտասի անունը:

Ամեն եկող անհատ ու սերունդ այդ մի դասը պիտի ճիշտ սերտի: Ինքը սերտեց: Իր սերունդը սերտեց: Իր սերունդը կոմիտասյան դասը, հենց ուսմունքը սերտելով կերտեց նոր-հզոր Հայրենիքի դիմանկարը: Մտերմիկ ասում են՝ կարող էիր ավելի շատ գրել: Իր սերունդը արարել է, կերտել, ստեղծագործել: Ինքը սերունդի մեջ է: Իր դիմանկարն առանձին չէ: Ոչ մեկն իրավունք չունի հողվորին ասել՝ քիչ ես վարել, այգեգործին ասել՝ մի ծիրանի ծառի տեղ դեռ ունես, սերմնացանին ասել՝ քիչ ես սերմել: Հողն իր աչքի չափը երբեք չի կորցնում: Գրել է այնքան, որքան թույլ է տվել իր սիրո՝ հողի աչքը: Երբ էլ ծնվե՛ր՝ այսքանն էր գրելու ու էսպես էր գրելու: Հազար տարի առաջ՝ նույն սիրով էր գրելու, հազար տարի հետո՝ նույն սերն էր լինելու: Հիմա իր բաժին հազարների թևերի մեջ է, ու այդ ու ահյակ նույն սերն է: Ամեն մարդ իր ժամանակին է ծնվում: Մեր աչքը լույս՝ հիմա է ծնվել: Հիմա է ծնվել, որ ասի՝ Կոմիտասը... Երանի՜ ժողովրդական են շուշան-շողակն մեղեդիների, որ ակունքված են հայոց վաղ միջնադարում, որ Նարեկացու հետ աղոթք են մրմնջացել, մտել հայոց երակների մեջ ու հոսել դեպի ոսկեծիրիկի ավունքը: Քո աշխարհը գեղեցիկ է ավելի, մարդիկ ավելի են սիրելի, երբ ճանապարհին երգ ու մեղեդի ես կորցնում: Երգ ու մեղեդի է կորցնում նավասարդյան առավոտը, ու օգոստոսյան կեսօրն ավելի հարուստ է դառնում: Երգ ու մեղեդի է կորցնում գունեղ երեկոն, իսկ առավոտյան երգ ու մեղեդուն ամծիր է շարմանդվում քո հոգու դաշտ ու սարերին: Ինքն անընդհատ կորցրել է: Չի էլ հասկացել, որ կորցրել է: Հիմ խոսք է՝ ունեցողը կկորցնի, չունեցողն ի՞նչ կորցնի: Քո քաղաքում, քո երկրում, քո ժողովրդի ծոցում մեղեդի ես կորցնում, սեր ես կորցնում, - դրանից մեծ հարստու-

թյուն ոչ մի Աստված շռայլորեն ոչ մեկին չի պարզակել: Մեծ մարգարեի ասածի նման Աստված իր տվածը մի օր ետ է ուզելու: Գոհ է, անչափ գոհ է, որ Աստված իր սերունդին սեր է տվել: Արհավիրքների միջով անցած մեր ժողովրդին խաղաղություն է հարկավոր: Ինքը Հայաստանի խաղաղության ֆոնդի նախագահն է: Աշխարհի մեծերի հետ խոսել է, խոսում է խաղաղության լեզվով: Այդ լեզուն իրեն տվել են հայ ժողովուրդը և Մարտիրոս Սարյանը...

Եթե ուզում ես բան ասել, պիտի համբերես: Ինքը պիտի բան ասեր, համբերեց ու մի օր ասաց. «Ճիշտ եք անում, որ հիշում եք երաժշտական դպրոցի, Կոմիտասի անվան կոնսերվատորիայի, Մոսկվայի իմ ուսուցիչների անունները, բայց եթե չլինե՛ր Մարտիրոս Սարյանի արվեստանոցը, ո՞չ Ղազարոսը Սարյան կդառնար, ո՞չ Առնոն Բաբաջանյան կդառնար, ո՞չ Ալեքսանդրը Հարությունյան կդառնար, ո՞չ Ադամը Խուդոյան կդառնար, ո՞չ էլ ես կլինե՛ի Էդվարդ Միրզոյան...»: Հայրենիք կերտող, գույներով Հայաստան հայտնաբերող Մարտիրոս Սարյանը իր Ձարիկ տղայի մտերին ընկերներին սովորեցնում էր իր դասը՝ ճանաչել Արևելքը, ճանաչել Հայաստանը, սիրել Հայաստանը ու բոլոր օրերում մնալ Հայաստանի գավակը: Հայաստանի գավակը Էդվարդ Միրզոյանն է, մարդ, արարիչ, որի կյանքը մի անվերջ համբույր է իր ժողովրդին: Էդվարդ Միրզոյանի համբույր-խրատ-կատակները ասես ականջօղ լինեն ու մարգարտե ուլունք: Էդվարդ Միրզոյանն իր հրաշալի ընկերների հետ սիր ժողովրդի ականջին բան է ասել 20-րդ դարում: Ով ականջ ունի, այն կբացի 21-րդ դարում ու եկող հարյուրամյակներում ու կլսի, կիմանա մեր երաժշտական փիլիսոփայի կենսավիշը:

Հրաչյա ՄԱԹԵՎՈՅԱՆ

## ՀՈՎՍԵՓ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ «ԼՈՒՅՍ» ԳՐՔԻՑ


Երևան մայրաքաղաքի առաջին պարբերականը՝ Պսակ շաբաթաթերթը լույս է տեսել 1880-84 թվականներին: Հայ կանացի առաջին թերթը՝ Կիթառ անունով, լույս է տեսել Կ. Պոլսում 1862-ին: Պարսկահայերի առաջին շաբաթաթերթը՝ Շավիղ, լույս է տեսել Թեհրան մայրաքաղաքում 1894-97 թվականներին: Արևելահայ առաջին պարբերականը Արևելյան ծանուցմունքն է, լույս է տեսել Աստրախանում 1816-ին: Արևմտահայ առաջին շաբաթաթերթը Լրոյ գիրքն է, լույս է տեսել Կ. Պոլսում 1832-50 թվականներին: Հայերեն առաջին քաղաքական լրագիրը Եվրոպա շաբաթաթերթն է, լույս է տեսել Վիննայում 1847-63 թվականներին: ԱՄՆ-ում շաբաթապատկերի (movie) արվեստի մարզում առաջին հայ դերասանուհին եղել է Ֆլորա Ջապելը, իսկական անունը Իզապել Մանկասարյան:

Աշխարհի առաջին գունավոր շարժապատկերը «Բեկի Շարք» (1935), ստեղծել է նշանավոր բեմադրիչ-արվեստագետ Ռուբեն Մամուլյանը: Երևան մայրաքաղաքի գետնուղին (metro) սկսել է իր աշխատանքը 1981 թվականի մարտի 7-ին: Առաջին գնացքը անցել է «Բարեկամություն» - «Սասունցի Դավիթ» երթուղիով: Գիտաբերական կայան մեծ վիպասան Ժյուլ Վեռնի առաջին հայ թարգմանիչը եղել է Տիգրան Տետյանը, նրա «Աշխարհի շուրջ 80 օրում» թարգմանած վեպը տպագրվել է Ջնյունիայում, 1875-ին: Հայկական առաջին բանաստեղծական ժողովածուն լույս է տեսել 1513-ին: Երևանի նորակառույց ռադիոկայան ձայնափյունի հաղորդումները առաջին անգամ եթեր է արձակվել 1926 թվականի սեպտեմբերի 1-ին:

## ՎԱՃԱՌՔԻ ԵՆ ՀԱՆՈՒՄ

«Ռեզնուն» գործակալությունը, հղում անելով ՌԴ կառավարության իր աղբյուրներին, տեղեկացնում է, որ «Գույք» պարտքի դիմաց» ծրագրով ՌԴ-ին հանձնված հայաստանյան ձեռնարկությունները կարող են հանվել վաճառքի, որոնց գնորդ կարող են դառնալ մասնավոր անձինք: Հիշեցնենք, որ վերը նշված ծրագրի շրջանակներում Ռուսաստանին են հանձնվել Երևանի «Մարս» գործարանը, Երևանի Մաթեմատիկական մեթոդների ինստիտուտը, Կառավարման ավտոմատ համակարգերի ինստիտուտը, Նյութաբանության գիտահետազոտական ինստիտուտը և Հրազդանի ՋԷԿ-ը: Այդ գործարքով ՌԴ կառավարությունը վերը նշված ձեռնարկությունները ողջ թափով աշխատեցնելու պարտավորություն էր ստանձնել, բայց ներկայումս բնականոն աշխատում է միայն Հրազդանի ՋԷԿ-ը, որ դրանից առաջ էլ աշխատում էր: Մեր տեղեկություններով, այս փուլում ՌԴ կառավարությունը մի շարք գործարարների հետ բանակցություններ է վարում «Մարսի» վերագործարկման հետ կապված: Իսկ գիտահետազոտական ինստիտուտների մասին առայժմ խոսք չկա:

# Բարի գալուստ Հայաստան



«Պետք է քաջ գիտակցել, որ վաղ թե ուշ հայկական սփյուռքը վերանալու է: Այն արդեն կիսով չափ սուզված նավի է նման...»:

Եվ քանի որ գլոբալացման պայմաններում սփյուռքահայերի ուժացումը ժամանակի ընթացքում անխուսափելի է, ապա ավելի ցանկալի է սփյուռքն «իր մարման ժամանակահատվածում լծվի հայրենիքի հզորացման գործին՝ դրանով իսկ հնարավորինս հետաձգելով իր անհետացումը»:

Այս մտքերին կարելի է ծանոթանալ «Ղեկավար Արարատ. Հայրենատարծության ազգային ծրագիրը՝ Հայաստանի զարգացման հիմնարար պայման» գրքույկում, որը հրատարակել է Հայրենադարձության և միավորման «Երկիր» միությունը: Իսկ երևի այդ միության նախագահ Սևակ Արծրունցին և «Նորավանք» գիտակրթական կենտրոնի տնօրեն Գագիկ Հարությունյանը հայրենադարձության խնդիրներին նվիրված քննարկում էին կազմակերպել:

Ասելիքը հետևյալն էր. պետք է պայմաններ ստեղծվեն, որպեսզի դրսում ապրող հայերը կարողանան վերադառնալ Հայաստան:

Սահմանադրությունն այժմ հնարավորություն է տալիս լինել Հայաստանի և միևնույն ժամանակ այլ երկրի քաղաքացի, սակայն «Երկքաղաքացիության մասին» օրենքը դեռևս ընդունված չէ, և արտասահմանից եկած հայերը գտնվում են անորոշ վիճակում: «Ես իմ երեխաներին, որոնք սովորում են Հայաստանի բուհերում, ստիպված եմ ամեն տարի գրանցել ՕՎԻՐ-ում», - ասաց հայրենադարձ Սևակ Արծրունցին:

Կան նաև այնպիսի խնդիրներ, որոնց մասին լսելիս՝ չգիտես՝ ծիծաղե՞ս, թե՞ տխրես: Օրինակ, Լոս-Անջելեսում գտնվող Վիգեն Արաբյանը մեկ տարի առաջ եկել է Հայաստան՝ մշտական բնակություն հաստատելու նպատակով: Իսկ նրա խընդիրները սկսվել են հենց գալուսն պես: Մաքսային կառույցը երկար ժամանակ

ծճճգել է նրա անձնական գույքի մաքսագերծումը:

Երեկվա նախաձեռնության հեղինակներն այս և այլ խնդիրները լուծելու համար անգամ «Հայրենադարձության մասին» օրենքի նախագիծ են մշակել, որն, իրենց իսկ խոսքերով, հավանության է արժանացել խորհրդարանական ուժերի կողմից:

Այս ամենի մեջ, իհարկե, ոչ մի քննադատելի բան չկա: Սակայն երբ նայում ես մեր հանրապետության սոցիալ-տնտեսական, քաղաքական և ժողովրդագրական պրոցեսներին, ապա հայրենադարձության վերաբերյալ ցանկացած ծրագրի արդյունավետությունը կասկածելի է թվում:

Եթե հիշում եք, սահմանադրական փոփոխություններին կողմ արտահայտվող ուժերի գլխավոր փաստարկներից մեկն այն էր, որ պետք է սփյուռքում ապրող մեր հայրենակիցներին հնարավորություն տանք դառնալ ՀՀ քաղաքացի: Այսինքն՝ ստեղծվում էր այնպիսի տպավորություն, որ սփյուռքահայերն այրվում են ՀՀ քաղաքացի դառնալու տենչով, իսկ մենք նրանց խոչընդոտում ենք՝ երկքաղաքացիությունն արգելող դրույթով: Փոփոխությունն ընդունվեց, այդ դրույթը դուրս եկավ, սակայն այսօր քչերն են հավատում, որ օրենքի ընդունումից հետո մեր քաղաքացիների թիվը զգալիորեն կաճի՝ ի հաշիվ սփյուռքահայերի: Խոչընդոտներից մեկն այն է, որ սփյուռքահայերի թվով առաջին տեղում գտնվող երկրները՝ Ռուսաստանն ու ԱՄՆ-ը արգելում են երկքաղաքացիությունը: Այսինքն՝ այդ երկրների ազգությամբ հայ քաղաքացիները պետք է հրաժարվեն քաղաքացիությունից, որպեսզի ձեռք բերեն ՀՀ քաղաքացու անձնագիր: Հետաքրքիր է՝ հանուն ինչի՞:

Արտասահմանում բնակվող հայը, որը հարուստ չէ, սակայն ունի աշխատանք, բարձր աշխատավարձ, նրա իրավունքները պաշտպանված են, ինչո՞ւ պետք է գա Հայաստան, որտեղ նրան սպասում են անորոշություն և իրավունքների ցածր պաշտպանվածություն: Միայն հայրենասիրության զգացումն արդյոք բավարար է հայրենադարձություն ապահովելու համար:

Այս հարցին փորձեց պատասխանել Վ. Արաբյանը, որին Մաքսային ծառայությունն արդեն հասցրել է հիասթափեցնել: Ըստ էության, վերջինիս ասածը ոչ թե պատասխան էր, այլ ցանկության արտահայտում՝ հայրենասիրական իդեալիզմը պետք է, սակայն պետք է լինի նաև ապահովվածության զգացում:

Իսկ ապահովվածությունը նախևառաջ պետք է ՀՀ քաղաքացիներին: Լրագրողներից մեկը հարց ուղղեց արտագաղթի վերաբերյալ, սակայն Ս. Արծրունցին, կարևորելով այդ խնդրի հրատապությունը, նշեց՝ «այսօրվա քննարկման նյութն այդ չէ»: Որոշ ժամանակ անց նա ավելի հստակեցրեց «նյութը». «Մենք ասում ենք՝ այս երկրում պետք է ապրի 4 միլիոնից ավելի մարդ»:

Հետաքրքիր պատկեր է ստացվում. մի կողմից՝ կարծես, միտումնավոր կերպով

այնպիսի պայմաններ են ստեղծվում, որ մարդիկ լքեն Հայաստանը, մյուս կողմից՝ ցանկանում են բարեկեցիկ և փափուկ կյանքին սովոր սփյուռքահայերին բերել Հայաստան: Դա այնքան էլ հեշտ գործ չէ: Գ. Հարությունյանի կարծիքով, Հայաստան եկող սփյուռքահայերին համդիպող դրժվարությունները հակազդվազը են մյուսների համար: Սակայն մի՞թե ամենամեծ հակազդվազըն այն փաստը չէ, որ հազարավոր մարդիկ, այդ թվում՝ մտավորականներ, լքում են Հայաստանը կամ պատրաստ են լքել առաջին իսկ հնարավորության դեպքում:

Առաջ է գալիս մի պարզ հարց՝ եթե պետությունը չի կարողանում ապահովել իր իսկ քաղաքացիների սոցիալական և իրավական պաշտպանվածությունը, ինչպե՞ս է ապահովելու մյուսներից: Եվ Գ. Հարությունյանի այն կարծիքի հետ, թե այս ծրագիրը ճիշտ ժամանակին է՝ դժվար է համաձայնել: Պատկերացրեք՝ օրենքը մոտ ապագայում ընդունվում է: Ինչպե՞ս է պետությունը երաշխավորելու, ասենք, 9.4 հոդվածի կատարումը. «Այն դեպքում, եթե հայրենադարձվել ցանկացողը հնարավորություն չունի ՀՀ-ում ինքնուրույն ձեռք բերելու բնակարան... նրան առաջարկվում է այն բնակավայրերի ցանկը, որտեղ հնարավոր է հատկացնել անվճար բնակարան»:

Ստացվում է՝ ՀՀ բոլոր քաղաքացիների բնակարանային խնդիրները լուծված են, հիմա էլ կարող ենք անցնել հայրենադարձներին: Իհարկե, շատ լավ կլիներ, եթե այդպես լիներ, սակայն դա պարզապես ինքնախաբեություն է և ստիպում է հիշել հայտնի ասացվածքը՝ մկան, անցքի (նկատի ունենք բույնը) և ցախավելի մասին:

Իսկ նայելով կառուցված ու կառուցվող էլիտար շենքերին՝ կարելի է հանգել ավելի տխուր եզրակացության: Մենք մեր անապահով ու խոցելի վիճակում գտնվող քաղաքացիներին պարզապես փոխանակում ենք առավել կայացած, ունևոր խավով՝ հյուսիսային պողոտայի չափանիշներին համապատասխան: Վատ չի...

Հետաքրքիր է նաև օրենքի նախագծի այն կետը, որով «...երկքաղաքացիության սկզբունքով ՀՀ քաղաքացիություն ստանալու իրավունքից կարող է օգտվել միայն նախկինում հայրենադարձի կարգավիճակ ունենալու դեպքում»: Իբր մարդիկ շատ են ուզում դառնալ Հայաստանի քաղաքացի, հիմա էլ՝ գործընթացն ավելի ենք բարդացնում: Պրն Արծրունու խոսքերով՝ ՀՀ-ի առաջարկած «Երկքաղաքացիության մասին» օրինագիծն իրենց համար հանելի անակակալ էր, քանի որ «չի հակասում իրենց օրինագծին»: Իսկ ամենակարևոր կետը, որի շուրջ ՀՀ-ի հետ միակարծիք են, այն է, որ ընտրելու և ընտրվելու իրավունք պետք է ունենան միայն Հայաստանում մշտական բնակություն հաստատած անձինք: Նշենք նաև, որ Ս. Արծրունցին «նախկին դաշնակցական» է (թեև ասում են՝ այդպիսիք չեն լինում):

Ի դեպ, մեջբերենք Վ. Արաբյանի բավական օրիգինալ միտքը: Նա հույս հայտնեց,

որ չնայած դժվարություններին, հայրենադարձության ծրագիրը հաջողություն կունենա և «... Սովետից մնացած վատ սովորությունները մի օր կվերանան»: Ինքն, օրինակ, ամեն առավոտ դուրս գալիս բարևում է շենքի պահակին և այսպիսով դրական փոփոխություններ մտցնում Հայաստանի կյանքում: Չէինք իմանում, որ «սովետի ժամանակ» պահակին բարև տալը պատվից ցածր էր...

Բոլորն էլ գիտեն, որ հատկապես ամերիկացիները սիրում են տեղի-անտեղի ժրպտալ, և բարևի տեղ օգտագործել «How are you?» (ինչպե՞ս ես) հարցը, որի պատասխանն իրենց ամենևին էլ չի հետաքրքրում: Մենք՝ հայաստանցիներս, միգուցե ավելի

մռայլադեմ ենք, ժպտալ չենք սիրում, բայց երևի ավելի անկեղծ ու սրտացավ ենք մեկը մյուսի հանդեպ: Ու երևի ավելի լավ կլիներ, եթե մարդկային հարաբերությունները մնային նույն «հետամնաց» մակարդակի վրա, ինչպես «սովետի ժամանակ»...

**Բարկեն ԹՈՒՆՅԱՆ**

# ՄԻ ԱՆՄԱՐ ԿԱՆԹԵՂ



«Եվ լայն օրում թե՛ ընկերներ, թե՛ բարեկամ ճանաչիր, Իսկ մեղ օրում ընկերներին ոչ որոմիր, ոչ կամչիր»:

Մարդահարաբերության մեջ գործող համրահայտ ճշմարտությունն է սա (այս անգամ Իսահակյանի ձևակերպմամբ): ճշմարտություն, որ սեփական կյանքով նորից ու նորից հաստատում է ամեն անհատ, նաև ամեն մի ժողովուրդ:

1988-ի աղետալի ողբերգությունից հետո առանց որոնելու, առանց կանչելու մեր ազգին ձեռք մեկնեցին շատերը՝ հազարներով, հարյուր հազարներով, միլիոններով: Մեր հեռու-հեռավոր հայրենակիցներից գերազնիվ հոգիներ եկան բեռ ու բարձով, օգտակար եղան, ցավ մեղմեցին: Եղան նաև, որ եկան ու մնացին, մնացին մեր ավերակների մեջ, մնացին, որ մեր հունից դուրս եկած կյանքով ապրեն, մեզ հետ, մեզ նման: Օգտակար լինելով մեզ՝ նաև կիսեն մեզ բաժին ընկած ցուրտն ու խավարը, մեր հուսահատությունը, վիշտն ու ցավը:

Նրանց մեջ կար մի կերպար, աստվածային մի կերպար: Աստվածային ոչ միայն իր եությանը, իր մաքրամաքուր նվիրումով, այլև Աստծո տան մշտական մի աղոթավոր, որպես լուսահունց մի սրբազան: Եվ ինչքան է ներդաշնակ էր «Սրբազան» հոգևոր կոչումը ոտից գլուխ սրբազնագույն այն հայորդուն, ում այնքան սիրեց մեր ժողովուրդն ու իր հոգուն փորագրեց՝ «Մեսրոպ Աշճյան»...

Բախտ ունեցա առնչվելու, մոտիկից ծանոթանալու նրա հետ: Նա գրույցներից, խոսքերից ստացած առաջին տպավորությունս այն էր, որ նա Մեծ Հայաստանի քաղաքացի է, որ նրա կուպերի տակ սրբորեն պահպանվում է չերկատված հայրենիքի պատկերը:

Ինչէ՛ր չարեց երևանաբնակ սրբազանը մեր ժողովրդի համար: Քանի՛-քանի՛ անգամ ակնատեսն եմ եղել, թե իր ձեռամբ աշխարհ եկած ամեն մի նոր գրքի շնորհանդեսին ինչպե՛ս էր հրճվում, ի՛նչ անափ ուրախություն էր ապրում, ասես նոր մանուկ էր աշխարհ եկել: Հրպա մնացյալ խոշորամասշտաբ այն գործերը, որոնք ձեռնարկել ու իրականացրել է նա...

Իրեն ճանաչելու օրվանից համակվել եմ պայծառ խոհերով: Հետո ամեն նոր հանդիպում նոր շերտեր ավելացրին ճանաչողությանս: Իսկ այսօր՝ հունիսի 18-ի այս պայծառ օրը, երբ մեթենաների մի ամբողջ շարասյուն ձգվում էր Երևանից դեպի Աշտարակի Մուղղի գյուղը, վերհուշերս ինձ հանգիստ չեն տալիս, իմ ունկերում անվերջ հնչում է սրբազանի ձայնը՝ փոքր-ինչ ոգևորված, փոքր-ինչ շտապող, և դեմքն է աչքիս առաջ՝ մշտաժպիտ, բարեհամբույր, հայացքը՝ խորախորհուրդ առեղծվածով...

Մուղղու 13-րդ դարի չքնաղ եկեղեցին իր զանգերով դողանջում է պատարագից հետո բացվելիք հուշարձանի մասին: Ձանգերի դողանջները կոհակ-կոհակ թափվում են եկեղեցու չորսբուլորը տարածված Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի ստեղծած եղենական այգու ծաղիկ-ծառերի վրա: Հասարակությունը եկեղեցուց շարժվում է Աշճյանի անունը կրող դպրոցի ուղղությամբ: Քիչ հետո դպրոցի բակում, խորհրդավոր մեղեդիներին խառնելով մետաքսի շրշուրը, ծածկոցը վերից վար բացում է հուշարձանը: Բոլորիս հայացքը, սպասումով լի, գամվում է հուշարձան դարձած սրբազանի դեմքին:

«Կես գիշերին կանթեղը վառ  
Կախ է ընկած երկնքից»:  
Այս ի՛նչ լուսահունց հայացք է, ի՛նչ անմար ժպիտ.  
«Կախ է ընկած առանց պարան  
Արագածի կատարին»:

«Լուսավորչի կանթեղի» տողերն ասես սավառնում են

արձանի չորսբուլորը.

«... Ու վառվում են միշտ անշեջ  
Սուրբի մաքուր արցունքները  
Յուղի տեղակ նրա մեջ»:

Թվում է՝ ուր որ է ժպտացող դեմքը ներքև կհառի ու կխոսի մեզ հետ: Մեզ համակած վայրկյանական քարացում-զարմանքը փոխվում է հիացքի: Տեր Աստված, ի՛նչ նմանություն: Հիմա՛, հիմա՛՝ ակնոցը կհանի աչքերից ու կխոսի... Համակ լռության մեջ սրբազանի քրոջ հեծկլտանքն է. հուզումը համակում է շատերին: «Եղբայրս է», - մրմնջում է քույրը արցունքի միջից...

«Լուսավորչի կանթեղն անմար  
Հայոց մթնած երկնքից»:

«Աղվոր գործ է «Լուսավորչի կանթեղը», շատ կսիրեն, կրնա՞ս կարդալ», - ասաց Ադամայի հայրենակցական միության հավաքին: Կարդացի, հետո էլի առիթներ եղան, և ամեն անգամ ասում էր՝ «Մեծ գործ է «Կանթեղը», շատ կսիրեն»:

Դարձյալ աչքերս հառում եմ ժպտացող դեմքին արձանի.  
«Երբ պատում է մութ խավարը  
Չընաշխարհիկ մեր երկրին...»:

Այսպես, չնաշխարհիկ երկրին պատած մի մութ խավարի նա եկավ Հայրենիք ու իր լույսն ու բարին բերեց մեզ, բերեց, ինչպես մշտական կանթեղ, որ իրենից հետո էլ կարծես այս արձանի պատվանդանից, այս ժպիտով թաթախված դեմքից լույս է տալիս բոլորին:

Բոլորի շուրթերին քանդակագործի անունն է հոլովվում՝ Արա Շիրազ: Ո՛ւր է: Բոլորն են փնտրում: Ոչ մեկը չի գտնում: Ասացին եկել է, ասացին երևացել է: Ասացին՝ գնացել է գուցե: Գուցե չի եկել: Չկար:

Անշուշտ, քանդակագործը լավ է ճանաչել սրբազանին: Գուցեն գրույցներ, խորախորհուրդ թեմաներ... Կարպետ ձեռք ու մտքին արվեստագետի գունարվել է նաև ներաշխարհային զգացողությունը...

Գործը ստացվել է, բոլորը գոհ են, ամեն մեկն իր ճանաչած սրբազանին է տեսնում պատվանդանին: Նրանց հիացքը փոխվում է խոսքի, փոխվում բարձրակարգ գնահատականի՝ հնչում հավաքվածների շուրթերին, հնչում փոխանակած կարծիքներում, բեմահարթակից հնչող ելույթներում. «Սրբազանը վերածնվեց», «Հուշարձանը նրա անմահության վկան է», «Հուշարձանը մեզ վերադարձնում է մեզ այնքան սիրելի սրբազանին»: Հավաքվածները մեծ խորհուրդ են տեսնում դպրոցականներից երբեք չբաժանվելու՝ սրբազանին բաժին ընկած առեղծվածի մեջ: Սրբազանի սրբություն սրբոց կերպարը, իր ժողովրդին նվիրվելու նրա կերպը համեմատվեց երջանակախիշտակ կաթողիկոսի՝ Վազգեն Ա-ի մարդկային նկարագրի հետ:

Ելույթ ունեցողները երախտիքի խոսք ուղղեցին ամենայն հայոց բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանին և լուսահիշատակ Հովհաննես Շիրազին՝ մեր մշակույթին մնա՞ն գավակ պարգևելու համար: Շատ ափսոս, որ գեղեցիկով, արվեստով, խորախորհուրդ իմաստներով հագեցած այս օրը դպրոցականներն ու նաև ներկաներս չկիսեցինք քանդակագործի հետ:

Սիրելի Արա Շիրազ, մեծատաղանդ արվեստագետ, փառքից խուսափելու համեստությունը գուցե զարդարում է ձեզ, բայց հավաքվածներից զրկեցիք երկար փնտրելուց հետո ձեզ գտնելու, երախտիքի խոսք ասելու ազնիվ մղումից...

**Սվետլանա ԽԱՆՈՒՄՅԱՆ**  
Ամունքող, փիլիսոփայական գիտությունների թեկնածու

ԱՐՏԱԳԱՂԹ

# Ռուսաստանի տարածք տարած է

Հայերը Ռուսաստանում նոր չէ, որ հայտնվել են: Իսկ գաղթականության նորագույն ալիքին ականատես ենք բոլորս: Մեզ թվում էր, թե ամեն ինչ գիտենք Ռուսաստանի մասին, բայց պարզվում է՝ այդպես չէ և անակնկալի եկանք, երբ լսեցինք ազգայնականների կողմից մեր հայրենակիցների սպանության լուրերը: Հայաստանում քննադատական ռեալիզմը թեև այնքան էլ արդիական բան չէ, այնուամենայնիվ, համարձակվում են ներկայացնել ականատեսի ակնարկը, որ մեկ տարվա մեջ երկու անգամ Ռուսաստանը կտրել է հյուսիսից հարավ, մոտիկից ծանոթացել և Մոսկվայի, և Սանկտ Պետերբուրգի, և Հյուսիսային Կովկասի հեռավոր ու մոտ գյուղերում հայերի, և ոչ միայն հայերի, նիստուկացին:

Սանկտ Պետերբուրգի շուկաներից մեկում ադրբեջանցի առևտրականների մոտ մի հայ երիտասարդ բեռնակիր է աշխատում: Այդ երիտասարդը նախկին ազատամարտիկ է, դարաբաղյան պատերազմում արիության համար պարգևատրվել է շքանշանով, մականունն է՝ ճուտո: Պատերազմից վերադարձել է հաշմանդամ (մինչև հիմա էլ կաղում է), սակայն իր տեղը չէր գտնում, հայրենիքից հեռացել է հուսալքված ու վիրավորված: Ադրբեջանցիների մոտ էլ աշխատանքի է անցել հայերի «իմադու»: Օրական վճարում են 100 ռուբլի, որ համարժեք է 1600 դրամին, սակայն Ռուսաստանում կյանքն անհամեմատ ավելի է ծան է: Շքանշանը միշտ մոտ է պահում, երբեմն ցույց է տալիս նույնիսկ ադրբեջանցիներին, թե տեսք՝ ինչեր են արել:

Ռուսական քաղաքներից շատերում հայերի ու ադրբեջանցիների միջև, չնայած առկա լարվածությանը, միանգամայն նորմալ գործնական հարաբերություններ են: Ադրբեջանցիները անգամ հաճախում են հայերին պատկանող սննդի օբյեկտներ՝ հայկական խորոված ուտելու կամ հակառակը: Երբեմն այն տպավորությունն են ստանում, կարծես դարաբաղյան պատերազմ չի էլ եղել: Գուցե դրա պատճառներից մեկն էլ այն է, որ Ադրբեջանից հեռացածների մեջ էլ հայրենիքից նեղացվածության սինդրոմ կա: Կամ էլ գուցե այն, որ և հայերի, և ադրբեջանցիների համար գոյություն ունի «սևերի» դեմ ոտնձգություններից պաշտպանվելու միևնույն խնդիրը:

Սակայն միշտ չէ, որ պաշտպանվելու հնարավորություն կա. օրինակ, երբ օմոնը (նստիկանության հատուկ ջոկատը) շուրջկալներ է իրականացնում շուկաներում կամ դրանց մերձակա տարածքներում: Եթե ընկար շուրջկալի մեջ, ապա մահակի հարվածներից ու նստիկանական բաժանմունքում հայտնվելուց չես խուսափի. օմոնականները պարզապես չեն տարբերակում լեզուներին ոչ լեզուներից, գնորդներին՝ վաճառողներից, օրինակապահներին՝ օրինագանգներից: Կարևորը նրանց համար ոչ սլավոնական արտաքինն է: Այդտեղ, պետք է ասել, ուկրաինացիների և հրեաների բախտը բերում է, իսկ հայերինը՝ ոչ: Ոստիկանական բաժանմունքում նոր սկսում են խորանալ «մանրուքների» մեջ: Դա կարող է նաև ժամեր տևել, հետո կտուգանեն ու բաց կթողնեն: Տուգանելու դեպքում էլ մի ստացական են տալիս, որ ռուս ոստիկաններից շատերը կապուկներով պահում են իրենց մոտ, հետո երկի պատռում-զցում են: Քանի որ հայերիս մեջ իրավագիտակցության մակարդակը շատ ցածր է, ռուսաստանյան օրենսդրությունը, որ հենց այս ոլորտում արհեստակարգեր են խճճված է, մեզ համար մնում է անհասանելի և անհասկանալի: Սակայն իզուր. ռուս ոստիկանների մեջ դեռևս մնացել է հարգանքը և վախը օրենքի հանդեպ:

Միայն է այն կարծիքը, ըստ որի էթնիկ կոնֆլիկտներում իրավապահ համակարգը մշտապես պաշտպանում է ռուսներին՝ ի վնաս այլազգիների: Հատկապես ոստիկանությունը բացասաբար է վերաբերում ազգայնականների «ինքնագործունեությանը», և ինչպես հատուկ է ավտորիտար համակարգերի ուժայիններին, կարող է նաև դաժանորեն պատժել «յուրայինին»:

Սակայն բոլոր հայերն էլ գիտեն, որ կան օրեր, օրվա մեջ որոշակի ժամեր, տվյալ քաղաքում որոշակի վայրեր, երբ վտանգավոր է անգամ փողոց դուրս գալը: Բուդյոնովսկի հայտնի իրադարձություններից հետո Ստավրոպոլի և Կրասնոդարի մարզերում տեղի ունեցան «կովկասյան ազգությունների» ներկայացուցիչներին սպանություններ: Սպանվեցին նաև հայ երիտասարդներ:

Առանց որևէ պատճառի, երբեմն էլ՝ առիթի: Նման դեպքերը աղմուկ են բարձրացնում, երբ տեղի են ունենում խոշոր քաղաքներում: Իսկ ռուսական «գլոբիկայում» դրանք հանձնվում են ժամանակի մարտողությանը: Տուժածների հարազատները շահագրգռված չեն աղմուկ հանելու, քանզի դրանից հետո կարող է ավելի վատ լինել մնացողների համար:

Ցանկանում են արդյոք հայերը թողնել Ռուսաստանը: Հրագրանցի Արթուրը Մոսկվայում միկրոբեռնատարի վարորդ է, ամսական վաստակում է 300-500 դոլար: Մոսկվա է բերել նաև ընտանիքին, 4 անձով ապրում են հանրակացարանի 9 թ/մ սենյակում: «Հրագրանում երկհարկանի տուն են թողել, - ասում է նա, - իհարկե կցանկանայի վերադառնալ, բայց ի՞նչ պետք է անեն»: Եթե Հայաստանում կյանքի պայմանները բարելավվեն, վերադառնալ պատրաստ են շատերը: Գուցե զարմանալի թվա, սակայն խոշոր քաղաքներում անգամ մեծ եկամուտներ և սեփական բիզնես ունեցող հայերից շատերը երկար տարիներ ստիպված են լինում ապրել բնակարանային վատ պայմաններում՝ հանրակացարաններում կամ «կոմունականերում»: մեկ սենյականոց վարձու բնակարանը առանց պառավ տանտիրուհու՝ արդեն մեծ հաջողություն է: Չնայած ասում են՝ ռուսի պառավ՝ վրոն է:

90-ական թ.թ. սկզբին Ռուսաստան մեկնողները իրենց հետ զգալի կապիտալ էին տանում, որ ձեռք էին բերում տների, ավտոմեքենաների, թանկարժեք իրերի վաճառքից կամ պարզապես բիզնեսն էին տեղափոխում: Նվազագույն գնահատումներով, այդ ձևով Հայաստանից Ռուսաստան արտահանվել է 5-7 մլրդ դոլար: Համեմատության համար ասենք, որ այդ տարիներին Ռուսաստանում արտասահմանյան բոլոր ներդրումների տարեկան չափը, ըստ պաշտոնական տվյալների, չէր գերազանցում 3 մլրդ դոլարը: Հայաստան ուղարկվող օգնությունները կարելի է համարել հենց այդ կապիտալի տոկոսները:

Սակայն վերջին տարիներին արտագաղթի սոցիալական կազմը փոխվել է: Ռուսաստան մեկնում են ոչ թե սեփական կապիտալ և սեփական գործ իմնելու նպատակով, այլ պարզապես աշխատանք փնտրելու, երբեմն՝ առանց որևէ կոպեկի: Հենց նրանց շրջանում էլ մեծ թիվ են կազմում ոչ լեզուները, նրանք իրավական առումով առավել անպաշտպան են և առավել հաճախ են բորբոքում ռասիստների և տարաբնույթ ազգայնականների ատելությունը:

Սակայն դա, միևնույն է, մերոնց չի կանգնեցնում: Ահա ինչպես է հայաստանյան և ռուսաստանյան կյանքի տարբերությունները ներկայացնում Բառնաուլում աշխատող Ռուբենը, որը վերջերս է հայտնվել այնտեղ. «Հայաստանում մշտապես մի տուփ սիգարետ գնելու կարիք ունես: Այստեղ ամիսը 1000 դոլար են աշխատում, ապրում ու ծախսում են ըստ ցանկության: Ինձ լիարժեք մարդ են զգում: Ոչ գողություն են անում, ոչ էլ՝ որևէ այլ հանցագործություն, իմ մասնագիտությամբ են աշխատում: Իսկ Հայաստանում այդպես հնարավոր չէ: Սքինհեդնե՞րը: Այո, գործ ունեցել են: Էլեկտրագնացքում մի անգամ ծեծի ենթարկեցին: Ընկերոջս հետ էի, իրենք՝ յոթ թե ութ հոգի, բոլորն էլ ատլետիկ կազմվածքով: Սկսեցին խփել ու վիրավորել: Չենք դիմադրել, վախեցանք, թե կսպանեն: Միայն ասացիմք հայեր ենք ու ռուսների հետ ուզում ենք բարեկամ լինել: Մի քիչ գոռոռացին, հետո թողեցին գնացին: Եթե Ռուսաստանում կյանքն անտանելի դառնա, միևնույն է՝ Հայաստան չեն վերադառնա, երկի կնեկնեն ԱՄՆ»:

Իհարկե, ոչ բոլոր հայերն են հաջողակ, այնտեղ էլ արդեն իսկ ձևավորվել է կարիքավոր հայերի խավը: Հայ երիտասարդներից շատերը համարում են, որ հաջողության հասնելու ամենակարճ ճանապարհը ռուս աղջկա հետ ամուսնությունն է: Առայժմ ռուսական իշխանությունները տարբեր կերպ խրախուսում են խառն ամուսնությունները: Այդ դեպքում բազմաթիվ խոչընդոտներ, ինչպես կասեր «Բարգավաճ Հայաստանի» ղեկավարը՝ «ինքնըստիմյան» վերանուն են, հեշտանուն է Ռուսաստանի քաղաքացիության ձեռքբերումը: Սակայն խառն ամուսնությունից մինչև լրիվ ռուսիֆիկացումը ընդամենը 1-2 տարուկ է բաժանում:

Իշխանությունների կողմից ազգային փոքրամասնությունների

ռուսացման ցանկությունը ավելի քան ակնհայտ է: Տարօրինակ է, բայց դրան մեծապես նպաստում են ազգային հողի վրա ձևավորվող հանցագործ կազմակերպությունները: Հայկական բազմաթիվ գաղթօջախներում դրանք յուրօրինակ «համայնքային իշխանություն» են ներկայացնում. լուծում են ծագող խնդիրները ոչ միայն համայնքի ներսում, այլև՝ այլ համայնքների կամ իրավապահների հետ հարաբերություններում: Հանցագործ խմբավորումները, իրենց բնույթով, ինքնաբերաբար ճնշում են համայնքի մշակութային և քաղաքական օջախները: Ջարմանալի չէ, որ 2 մլն-ից ավելի հայերը Ռուսաստանում ոչ մի քաղաքական կազմակերպություն չունեն, իսկ մշակութային կյանքը համարյա

սառեցված է: Միայն խոշոր քաղաքներում մի քանի հայկական թերթեր, ամսագրեր կան, իսկ հեռուստառադիոալիքների մասին ընդհանրապես ավելորդ է խոսել: Այլ երկրների ավելի փոքրաթիվ հայկական համայնքները այս առումով շատ ավելի ակտիվ են:

**Սամվել ԱՎԱԳՅԱՆ**

**Հ. Գ. Աղետի ենթարկված «Ա320» օդանավի ուղևորների մեջ քիչ չէին սոցիալական ծանր պայմանների հարկադրանքով հայրենիքից հեռացող և Ռուսաստանում ապրուստի միջոց որոնող ՀՀ քաղաքացիները:**

**ՊՍՏԼԻԿ ԿՂԶՅԱԿ ԱՆԲԱՐՅԱՑԱԿԱՄՄԵԾ ՇՐՋԱՊԱՏՈՒՄ**



«Լիտերատուրնայա գագետա»-ի վերջին համարներից մեկում տեղ է գտել Վալենտինա Պրուսակովայի հոդվածը՝ Ստամբուլի հայ համայնքի մասին: Ինչպիսի՞ն է պատկերանուն մեր հայրենակիցների կյանքը օտարերկրյա լրագրողներից: Կարծում ենք՝ այդ մասին հետաքրքիր կլինի իմանալ նաև մեր ընթերցողներին: Այսօր թուրքիայում, ավելի ճիշտ՝ Ստամբուլում, գոյություն ունի 60 հազարանոց հայ համայնք: Ինչպե՞ս են ապրում այդ մարդիկ, և ինչպե՞ս են նրանց վերաբերվում թուրքական իշխանությունները: Վերջերս, երբ գնացել էի «Երկրորդ Հոռն», փորձեցի պարզել դա: Առաջին հերթին հարկ էր գտնել հայկական եկեղեցի, քանզի ցանկացած ազգային համայնքի կյանքը միշտ սերտորեն կապված է լինում նախ և առաջ Աստծո տան հետ: Թուրքիայում հայերի գլխավոր տաճարում՝ քաղաքի հին մասում գտնվող Սուրբ Մարիամ եկեղեցուն, թեև Օղղկազարդի կիրակին էր, բայց մարդաշատ չէր. ընդամենը 30 հոգի: Պատարագի ժամն էր, և ինձ չհաջողվեց որևէ մեկի հետ խոսել: Ջարմանալի է, որ ներկաների մեջ, չգիտես ինչու, կային մի քանի սևամորթներ... Եկեղեցու վերևում ծածանվում էր թուրքական դրոշմը: Հաջորդ օրը այցելեցի գլխավոր ազգային տաճարից մի քանի րոպեի ոտքի ճանապարհի վրա գտնվող հայկական դպրոց: Դրա շենքի վերևում նույնպես, բնականաբար, ծածանվում էր դրոշմը, իսկ նախապահում այցելուներին դիմավորում էր Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Աթաթուրքի կիսանդրին, որի տակ նշված էին նրա դասական ասույթները. «Թուրքը ազնիվ է, աշխատասեր, հուսալի» և «Ինչպիսի՞ երջանկություն է ասել՝ ես թուրք եմ»: Երբ ես ու հետիս ռուսաստանցի երեք լրագրողները խնդրեցինք դպրոցի տնօրենին՝ Սինեյր Իլդիզ անունով հային, պատմել իր ղեկավարած ուսումնական հաստատության մասին, նա անմիջապես կանչեց հարևան սենյակում գտնվող թուրք տեսուչին կրթության նախարարությունից, որն էլ տրամադրեց մեզ հետևյալ տեղեկատվությունը. «Այս հայկական դպրոցը գոյություն ունի 1923 թվականից:

Պարտադիր առարկաների մեծամասնությունն այստեղ ուսուցանվում է թուրքերեն: Դասավանդվում են նաև հայոց լեզու և հայկական կրոն: Բայց դասընթացներ չկան ոչ ազգային պատմության, ոչ էլ ազգային մշակույթի վերաբերյալ: Դպրոցը որևէ շփում չունի ոչ Հայաստանի, ոչ էլ հայկական Սփյուռքի հետ: Նմանօրինակ այլ դպրոցներ էլ կան, որտեղ սովորում է երեք հազարից ավելի երեխա: Հայկական դպրոցները դրամական օժանդակություն են ստանում պետությունից, նրանց օգնում են նաև տեղի հայկական հիմնադրամները: Ուսումն անվճար է: Ուսուցիչների աշխատավարձը նույնքան է, որքան թուրքիայի բոլոր դպրոցներում»: Սենք շրջեցինք նաև դպրոցի շենքում, որտեղ ամենուր բազմաթիվ Աթաթուրքեր էին, և բավական սակավաթիվ երեխաներ, որոնք ինձ չափից ավելի սուսիկ-փուսիկ ու վախվորած թվացին: Ասենք, զուցե դա ընդամենը իմ սուբյեկտիվ տպավորությունն է: Դպրոցի առաջին հարկի պատուհանները պատկանելի երկաթե ճաղերի պաշտպանության տակ են. մանկահասակ թուրք խուլիգանները երբեմն սիրում են գնդակոծել դրանք ինչպես «խճաքարերով», այնպես էլ մեծ «զլաքարերով»: Իսկ ինչ վերաբերում է դասարանների կահավորմանը՝ ներառյալ համակարգչայինը, ապա կա միանգամայն ժամանակակից տեսք ուներ և, հավանաբար, առանձնապես չէր տարբերվում այն ամենից, ինչ կարելի է տեսնել թուրքական մյուս դպրոցներում: Ստամբուլում կա հայկական թերթ: Բայց գտնել դրա խմբագրությունը, ինչպես պարզվեց, հեշտ չէ. հայերը Թուրքիայում նախընտրում են առանձնապես ի ցույց չդնել իրենց գործունեությունը, և իմաստ չունի շենքերի պատերի վրա փնտրել այս կամ այն հայկական հաստատության գտնվելու վայրի մասին վկայող որևէ ցուցանակ: «Նոր Մարմարա»-ի խմբագրությունը ի-

շեցնում էր բարձրորդի վիճակում գտնվող խոշոր բնակարան լեփ-լեցուն հին թերթերով ու գրքերով: Նույնքան հոգնած ու ոչ երիտասարդ տեսք ունեին նաև նրա աշխատակիցները:

- Կարո՞ղ է արդյոք ձեր թերթը գրել ամեն ինչի մասին, - հարցրինք գլխավոր խմբագրին: - Ո՞ր թեմաներն են համարվում արգելված:
- Մեզ արգելված է խոսել այն ամենի մասին, ինչը տարանջատում է երկիրը, ազգը: Վերջին ժամանակներս սակայն ազատությունն ավելացել է, սահմանափակումները՝ նվազել: Այսպես, մենք տարբեր կարծիքներ ենք հրապարակում Ցեղասպանության մասին...
- Կարելի՞ է խոսել Թուրքիայի քաղաքացիների հետ հայերի բացարձակ իրավահավասարության մասին: Ի՞նչ սահմանափակումների են նրանք բախվում:
- Հայեր կան խոշոր բիզնեսում և խորհրդարանում... Բայց մեզ արգելված է աշխատել ոստիկանությունում, բանակում, ընդունվել պետծառայության: 1939 թվականին հայերը բռնագրավված ձեռնարկությունների և անշարժ գույքի մի մասը հատկացվեց գանձարանին: 1974 թվականից փորձում ենք դատարանների միջոցով վերադարձնել այդ սեփականությունը, բայց առայժմ անարդյունք:

Ստամբուլի հայկական թերթը, նրա խմբագրի խոսքերով, որևէ կապեր չունի ոչ Հայաստանի, ոչ էլ հայկական Սփյուռքի հետ: Այլ կերպ ասած, նրանք, ինչպեսև ողջ համայնքը, պատիկ կոչյալ են թուրքական մեծ և ոչ այնքան բարյացակամ շրջապատում: Թուրքիայում հայերի վիճակի մասին, իմ կարծիքով, պերճախոս վկայում է հետևյալ փոքրիկ հանգամանքը. Ստամբուլում, որտեղ լիառատ են ամենատարբեր ազգային ու էկզոտիկ ռեստորանները, առ այսօր չկա այդօրինակ ոչ մի հայկական հաստատություն:

**В Стамбуле и Карсе живет около 70 тысяч нелегальных мигрантов из Армении**

В крупнейшем городе Турции - Стамбуле и в граничащей с Арменией провинции Карс проживает не менее 70 тысяч нелегальных мигрантов - граждан Армении, прибывших сюда за последние 10 лет, сообщает турецкая газета «Джумхуриет».

Как отмечает ИА REGNUM, трудовой строй нелегальных мигрантов - граждан Армении, Азербайджана (в Турции работает около полумиллиона граждан этой страны) и Грузии (не менее 100 тысяч) возможно, в первую очередь, потому, что турецким предпринимателям выгодно дешёвая рабочая сила. К тому же эти люди наиболее бесправная часть населения.

Լևոն ՋԱՎԱԽՅԱՆ

ՄԵՐ ՃԱԿԱՏԻ ԺԱՆԳՈՏ ՄԵԽԸ

Ես ուրախությունից գլուխս կորցրել էի... Դեռ գտա ու տխրեցի: Շուրջս մառախլապատ ծմեռ էր և սպիտակ տրտմություն: Չյուրը դիզվել էր տանիքներից, իսկ փողոցները փափուկ էին այնքան... Մեր ապաստարանը տաք սրճարաններն էին: Սովորաբար գլուխըս ես կորցնում էի, երբ հետաքրքիր բան էի տեսնում: Դեռ մեկը ուրախությանս վրա սառը ջուր էր լցնում, և ես վերստին գտնում էի գլուխս: Այդ օրը զարմանալի կինո էի տեսել: Փոքր կպատմվեր, եթե հիացմունքս չկիսեի ընկերներիս հետ: Սրճարան գալուս բուն իմաստը դա էր: Պատմությունս գալիս է լավ-լավ տեղերից.

- Իսկ այժմ, - հայտարարեց հանդիսավարը, - ելույթ կունենա Սև կոթողը...

Նա սև զգեստով պարուրված հսկա կոթող էր՝ ամեհի կրծքերով և որ ամենազարմանահրաշմ էր՝ ածդահա, Մարկեսը կասեր՝ գալակտիկական չափերի հասնող հետույքով: Նա միաժամանակ և՛ երգում էր, և՛ պարում: Դեռ մի բան էլ ավելի... Սև կոթողի հաստաբուն ոտքերի տակ թավալվում էր մի խեղճ ու կրակ տախտակ: Այն կլիներ հինգ մետր երկարությամբ և ավելի քան տաս սանտիմետր հաստությամբ: Նրա կենտրոնում խրված քառորդ երկարությամբ մեխը տախտակի երկու հակադիր երեսներից կիսով չափ դուրս էր ցցված: Սև կոթողը նազանքով «գալակտիկան» պատում էր զոհի գլխավերևում: Սարսափելի ձգողականությամբ տիեզերական այդ մարմինը, այդ սև խռոչը դիվային ուժով կախվել էր սպիտակ մեխի վրա՝ իր ճանապարհին սպառնալով կլանել ամեն ինչ: Այնուամենայնիվ, փորձում էր դա անել սիրով ու գորովանքով, որքան էլ դիմացինը երկաթյա սիրտ ուներ: Նա, մեխի գլխավերևը պտտվելով, հանդարտ իջնում էր և ասես անպարագիծ մի հմայիլ լիներ, որ ուր որ է՝ գայթակղելով իր կործանարար խռոչն էր առնելու դիք-դիք տնկված անլեզու այդ հայվանին: Նա արդեն իսկ աննկատ կլանել էր մետաղի ողջ երկարությունը: Մեխը ասես չէր եղել: Սև կոթողը մի պահ, ասես ձվի վրա բնադրվող հավը, տախտակի վրա զգույշ տեղավորվում էր: Պրկվեց: Առաջինը դա իր մաշկի վրա զգաց փայտը: Տախտակը աղիոողորմ սկսեց ճնջալ: Դեռ նրա մեղանախոտ հնչյունների ներքո Սև կոթողը սկսեց վեր բարձրանալ: Նրա երկու կիսագնդերում լուռ ու մուռն զսպված վեր էր խոյանում նաև երկաթի գեղյակ հատվածը...

- Ես էլ ասում եմ՝ ես ի՞նչ ա երկար-բարակ պատմում... Դու էլ որտեղ մի ախմախ բան ես տեսնում, դրա վրա ես ուրախանում... - իմ ոգևորությանը, ինչպես նաև հուզական գեղարվեստական պատումին, վերջ դրեց ավանդապահ, ազգայնական ընկերոջս չարախինդ ժպիտը:

- Ուրեմն Կուստուրիցան ախմախ ա, հա՞... Նրա «Ա կատու և սպիտակ կատու» ֆիլմը ախմախություն ա, հա՞..., - չէի նահանջում ես:

- Հա, է, հա... Դրանով ի՞նչ ա ուզում ախ..., - գրոհը շարունակում էր ազգայնականը:

- Ուզում ա ասի, որ աշխարհում բաներ կան, որ ուրիշները չեն կարող անել, բան էլ կա, որ միայն մի մարդ կարող է անել..., - անբացատրելի բացատրելով, իզուր, փորձում էի մի բան տեղ հասցնել, զգայականը խոսքի վերածելով՝ փչացնելով զգացածս...

- Էդ ախմախությունը..., - հեզմանքը սառցի նման կտրում էր միտքս:

- Դու, դու, - անզորությունից կատաղել էի, - նաև և ձեր պատգամավորական կոալիցիան կարո՞ղ եք, թեկուզ և խմբակային, քամակով տախտակից մեխ, գոնե մի մեխ դուրս քաշել...

- Չէ հա, - ասաց ռեժիսոր Արմենը, որն իմ պես Կուստուրիցայի բալեշիկն էր, - դրանք ազգի բախտին հենց մեխ են խփել, որ հետո կարողանան դուրս հանեն:

- Մեր ընկերը հին ազգայնական ա, - կողքից հուշեց Մարտիրոսը, - նա կարող ա դուրս քաշի...

- Ես՝ չէ, - մի պահ մտքերի մեջ ընկավ մեր ազգայնական ընկե-

րը, - բայց... բայց մեր Կարողը վայթե հանի...

- Դե, Կարողչին էլ դարձրեք պրեզիդենտ, էլի..., - լուծումը կարծես թե գտել էի ես:

- Առջևում նոր ընտրություններ են, - բազմանշանակ ժպտաց ազգի նվիրյալը, - «Մի քիչ կացի՝ հրես կերևա...»:

Այդ պահին ես շատ էի հեռու ընտրություններից: Այս պահին մոտ էի նրան: Ընկերոջս հինգ մատիս պես գիտեի: Նրա ողջ կյանքը անմնացորդ նվիրում էր ազգային գործին: Թեև դրանից կարող էր և տուժել ազգը, բայց ամենից շատ տուժել էր նա: Նրա կյանքում հայությունից բացի ոչ ոք չէր եղել: Բարոյականության մասին նրա պատկերացումները միանգամայն անհամատեղելի էին Կուստուրիցայի կոթողային հերոսներին: Նրա պահպանողականությունը ինձ գրգռում էր: Ամեն կերպ ուզում էի հոգու հետ խաղալ՝ չխորշելով շահարկել անգամ նրա կուսակրոն վարքը:

- Միթո՞ն թե, - ասի, - ընկեր Կարողչին խի՞ չես առնում...

Ճիշտ գարշապարին էի խփել: Տեղն ու տեղը ընկերս այլակերպվեց՝ վայրկյանապես ազգային փառապանծ գործիչից վերածվելով մի սովորական փերեզակ Դարչոյի:

- «Բաս, - ասաց, - յիս քու միղբը չի՞մ գալի՞ս...»:

- Կյանքումդ, - այնուամենայնիվ, չէի բավարարվում ես, - դու որևէ կնոջ հետ եղած կա՞ս...

- Չէ, - բնականաբար, լսեցի ես:

- Բա ի՞նչ ես անում, - իբր թե նոր էի զարմանում:

- Օճանիզմով եմ զբաղվում, - զարմանքն էլ ո՞նց է լինում. դա արդեն ինձ համար զուտ նորույթ էր, իսկ նրա համար, հուսով եմ, մի մեծ քայլ՝ պահպանողականությունից դեպի ավանգարդ:

- Գոնե էդ պահին սիրուհիներիդ փոխո՞ւմ ես, - ոգևորվել էի ես: - Բա, - խեղճացավ, - շարունակ մեկի հետ եմ...

Ասեմք, այլ կերպ չէր էլ կարող լինել: Հայրենասերի համար դավաճանությունը վիրտուալ կյանքում նույնքան անթույլատրելի էր, որքան իրականությունում: Ավաղ: Երկրի ազատության համար մարտնչող մարտիկը, ինքը, ազատ չէր, անգամ անկարող էր ազատ երազել: O tempora, o more! Նրա կյանքն էլ կյանք չէր: Ջանի միսն ուտելով՝ ապրում էր: Ապրում էր միայնակ... առանց «հայրենիքի»:

- Այ ընկեր, - ասի, - ազատ ապրի, ազատ, անկաշկանդ՝ տեսնո՞ւմ ես, թե ոնց են ապրում վերոպաներում, - ու որպես անձնական օրինակ, ոտս ոտի վրա դարսած, ամերիկավարի, լոջվեցի դատարկ աթոռին: Շարժումս էնքան էր ինքնավստահ, անզույշ, որ ինքնաբերաբար հավասարակշռությունս կորցրի ու մեջքիս վրա զնացի... Թե ո՞ր, Մարտիրոսն ու Արմենը տեսան, ու ահաբեկված վեր թռան, որ ինձ օդումը բռնեն: Իսկ նա կարեկցանքով ինձ էր նայում:

- Տեսնո՞ւմ ես, - ասաց, - թե ինչ է նշանակում ոտքի տակից ազգային հողը կորցնելը...

Էդ նրա կարծիքով... Ես չէի ասի, թե իմ ոտքը ես երկրի հողից կտրվել է: Ինչքան ինձ հիշում եմ՝ շարունակ հայրենիքի հետ եմ. մեր գյուղից ու երևանից այն կողմ գրեթե բան չեմ տեսել: Իմ հայրենասիրությունից ես միայն տուժել եմ: Ես է՛լ ապրիլի սկզբներին շուրջ հիսուն գրողներով մեկնելու նա արտասահման, իհարկե, առանց ինձ: ՀԳՄ նախագահ Լևոն Անանյանը «Հայկական ժամանակ»-ում տպագրվող ստեղծագործությունները գեղարվեստական չի համարում: Ուստի և նրանց հեղինակները գրող չեն կարող համարվել. էլ ո՞ր մնաց արտասահմանը... Իմ միխթարությունն այն է, որ իմ բանտը իմ հայրենիքն է: Իսկ ինչ մնում է գեղարվեստական աժեթին, ապա ըստ Լևոն նախագահի՝ գեղարվեստական եմ այն բոլոր երկերը, որոնք տպագրվում են գրական մամուլում, անհամ եմ ու չեն ընթերցվում:

- Իսկ ինչն՞ է դուք Գրողների միության անդամ չեք, - հարցնում են ինձ:

- Ես չեմ ուզում իրենց հավասարվեմ, - պատասխանում եմ ես: Հիմա կասեմ՝ աղվեսի դուռը խաղողին չի հասնում, ասում ա՛

խակ ա... Թող ասեն... Իրենք Պառնասում, ես՝ Վերնիսաժում, ո՞նց հասնեմ... Նամանավանդ որ, ես չեմ էլ ուզում իրենց հավասարվեմ...

Սա չի նշանակում, թե ես ազգանպաստ գործունեություն չեմ ծավալում: Ես վերջերս էր, արծաթեղենով լի կաշվե դարչնագույն հնամաշ պայուսակը ձեռքիս՝ վերադառնում էի տուն: Նախանշյան փողոցի վրա դեմս ելավ թուրքահայաստակ ընկերս՝ Սարգիս Զացապանյանը, որը հաջողությամբ ինտեգրվել էր Զայաստանում:

- Այդ ի՞նչ է պայուսակիդ մեջ, - ցույց տվեց խառնախուռա գարդեղենից ուռցորված պայուսակս:

- Ճիտին պարտքս, - ասի:

- Ճիշտ այդպիսի պայուսակ, - խնդում էր: Նա ապշած էր իմ պայուսակի նմանությունից, - Ստամբուլի մեջ իրենց ձեռքում պահում են սուննաթչիները... Նրանք այ, այսպիսի պայուսակը ձեռքներին Ստամբուլի փողոցներով «սուննաթչի, սուննաթչի» կանչելով գնում են... Ովքեր ուզում են իրենց երեխային սուննաթիել՝ հրավիրում են ներս...

Ընկերս լավ էլ նկատել էր: Մի սուննաթչի էլ ես եմ: Զատուկ այդ նպատակով ես էլ իմ գործիքներն ունեմ: Արծաթից գատ, պայուսակիս ձախ գրպանում միշտ ինձ հետ է թուղթն ու գրիչս: Ով ազգադավ գործ է անում՝ էլ դես-դեն չեմ ընկնում, շտապ հանում եմ գործիքներս ու «սուննաթում»...

Էհ, ինչքան էլ հոխորտամ, գրիչս թրի պես աչ ու ձախ ճոճեմ ու դավաճաններին թլփատեմ, էլի մնալու եմ որք ու անպաշտպան, ես՝ դախլիս ես կողմում, նրանք՝ էն կողմում... Եվ գալիս, բարձած ուղտերի պես անց են կենում թալանչին ու կողոպտիչը, չարագործն ու հանցագործը, մարդասպանն ու մարդատյացը, ամբարիշտն ու անբարոն, ընդդեմն ու անառակաբարոն, մանկապիղծն ու մանկաբողբ, անհագն ու ազահը, անխիղճն ու անհոգին, զանձագողն ու դրամաշորթը, ստորն ու սրիխան, մաքսավորն ու վաշխառուն, օլիգարխն ու օրինախախտը, կաշառակերն ու կաշառատուն, իշխանաբաղձն ու իշխանադավը, տերավորն ու անտերը, շողոթորթն ու քծնողը, փարիզեցին ու երևանցին, փոքր ճանփեքի ջիբգիրներն ու մեծ ճանապարհների ավագակները, և վերջապես, այս քարավանն առաջնորդող պատգամավորական կուպիցիան... Շունը հաչում է, քարավանը՝ գնում... Միտս տազնապով դողանջում է: Կանգ առ, քարավան, տես՝ ինչ հրաշք է կյանքը... Կյանքն անուշ է առանց մեղքերի... Մեծ պաս է: Իմ ընկեր վարոն չի ուտում, չի խմում, ես օրերին կնոջ անկողին չի մտնում, որ դրախտ գնա: Երանի նրանց, ովքեր իրենց գանձերը երկնքում են դիզում: Ո՞ր եմ ձգվում բեռները մեղքերի... Միևնույնն է, այնտեղ ցուրտ է ու խոնավ և ասամների կրճտում, այնտեղ մութն է բնակվում ծակ աչքերում, հողով են խցանված խուլ ականջները, որոնք ու զեռունն են սնուցում անկուշտ բերանները, և օձն է գալարվում պաղ սրտերի վրա: Կանգ առ, քարավան, տես, կյանքն է կանգնել... Մինչդեռ չարիքը մեխվել է լիակած ուղեղում, միտքը կարկանդակ գանգատուփի մեջ, ու մեր երազանքների չուն այլևս հանգրվան չունի: Կանգ առ, քարավան, այդ ո՞ւր ես գնում... Բախտը մեզ ազատություն տվեց, որ օտարից անկախանանք... Սակայն մենք դարձանք մեր շահի ստրուկը: Զայաստանի ազատ, անկախ Զանրապետությունը դարձավ իր իսկ ժողովրդի ազատ, անկախ կողոպտիչը: Շատերի ունեցվածքը հոսեց քչերի գրպանը: Նրանք կորցրին նախնայաց հավատը: Նրանց աստվածը հիմա փողն է: Փողը, որ պահում են ջեբներում: Չեքի աստվածն ի՞նչ պիտի լինի: Խարանը մեր կրծքին մենք դրինք: Ազգովի մի քար օգեցինք ծովը, ու հիմա գոնե մեկը չկա, որ էդ քարը էդ ծովից հանի: Մենք կորցրել ենք մեր ընտրյալին: Առավել քան երբեք մենք ընտրյալի կարիք ունենք: Վերջապես մեկը պիտի լինի, չէ՞, դարաբաղյան թնջուկը հանգուցալուծելու համար:

...Մեր սրճարանային գրույցը աննկատ տեղափոխվել էր քաղաքական դաշտ:

- Զայաստանի հարցերի մեխը Ղարաբաղի պրոբլեմն ա, - հոգոց քաշեց ազգայնական ընկերս, - թեկուզ աշխարհն էլ իր քամակը դեմ տա՝ էդ մեխը տեղից ժած եկողը չի...

- Քեզ թվում ա, - հանգիստ առարկում էի:

- Ուրիշ ձև կա՞, - դա հետաքրքիր էր նաև Մարտիրոսի և Արմենի համար:

- Միթո՞ւմ ինչի՞ եմ երկու ժողովուրդներին իրար խառնում, - նրանց լայն բացած աչքերի առաջ, ասես մարտի դաշտում, ճկուն մտքիս արգասիքն էի փռում: - Դու՞ն էլ չէր... Քանց գոր-

քերը պիտի կոտորվեին՝ երկու թագավորներն էին իրար դեմ դուրս գալիս... Ով հաղթեց՝ հաղթեց...

- Էթենց կարող ա՞, - խուճապի մատնվեց Մարտիրոսը, - մենք տանուկ տանք... Նրանցը բոյով, ջանով ա... Էդ ջանդաքը գետնով տալ կլինի՞...

- Զի ասվի, - ասի, - մերն էլ գեղացի կռված տղայա, մին էլ տեսար՝ լոմով, կացնով մի բան արեց...

- Լևո՞ն..., - բացականչեց ռեժիսոր Արմենը, - համա գրող ես, հա՞...

- Ճի՞շտ..., - չէի հավատում:

- Զա, հա, - քաջալերեց ազգայնական ընկերս, որին իմ լավատեսությունը խիստ էր ուրախացրել, - դու բոլոր տվյալներն ունես մեծ գրող լինելու համար, բացի...

- Բացի՞..., - լոշտակ ականջներս լակատրների նման լարած սպասում էի:

- Բացի խելքից, - ասաց:

Էդ մեկը չպիտի ասեր: Ասենք, ես երկրում խելքի պակաս ո՞վ չունի... Ունը թամամ ա՞ թող առաջինը նա վրաս քար օգի: Բայց պակաս էլ կա, պակաս էլ: Լռովա աշխարհում մի գյուղ կա, ուր միտքը շարունակ դոփում էր նույն տեղում: Դա Լավարա փեշերին ծալված Աբորին էր: Աբորվեցուն բառը հասու էր այնքան, որքան թույլ էր տալիս բառահնչյունը:

- Այտա, որդենցի՞ ես, - հարցնում է աբորվեցին ոռնակեցուն (Ոռնակը ներկայիս Ակներ գյուղն է: Այն միայն սովետական կարգերի շնորհիվ բարեհնչյուն դարձավ):

- Ոռնակեցի, - խոստովանվում է Ոռնակում ապրողը:

- Այտա, էդ ի՞նչ տաք տեղից ես, - ապշում է աբորվեցին:

Նրան հասկանալ կարելի էր: Նրանք իսկապես տաք տեղի կարող էին: Ես չէ, Երվանդ Լավարյանն է պատմում: Շնորհից, որ տգիտությունը հայրենիքն էր, մի սիրուն հարսիկ են բերում Աբորի: Շնորհա տխմարության մասին ողջ Լռովա ձորում առասպելներ էին պատմում, բայց որ նրանց դուրս եկած հարսը Աբորու համեմատ փառք էր, դա դեռ հետո կիմանաք: Զարս հո չէ՞ր, մի շարմաղ, պայծառ միտք էր միամիտ խավարում: Սա մի օր նկատում է, որ կրակի շուրջ տաքանալիս գյուղացիք իրենց տակ ավազի պարկեր են պահում: Կրակն էլ հո կրակ չէ՞ր, Աստծո ոտքեր էր վառում: Խարույկի թեժանալու հետ ամեն մեկն իր տակից բռավ ավազը հանում ու ցանում էր տաքությունից այրվող ծնկներին: Ադաթին հնագանդ ամաչկոտ հարսը էլ չի դիմանում. ձեռքի ափով փակած բերանը մոտեցնում է սկեսրայրի ականջին:

- Այի, - ասում է սկեսրայրին, - հլա մի քիչ եդ քաշվի...

Շնորհեցի էր, հո աբորվեցի չէ՞ր, որ էդքանը չհասկանար: Սկեսրայրը հետ է քաշվում: Զգում է, որ ծնկները հովազան, կրակի ցուլք էլ երեսին չի հասնում, ծնկներն էլ չեն վառվում:

- Բեգո, համբո, Սահակ, Թևան, - դառնում է ընկերներին, - ադա, հլա եդ քաշվեք:

Զետ են քաշվում և ի՞նչ այրվող ծնկները միանգամից զգալ են տալիս ցերմության փոփոխությունը:

- Բո՞ւ..., - զարմանում են, - ադա, դու էդ դդամ խելք ես ունեցել՝ մենք բանից անտեղա՞կ...

- Մեղքս ի՞նչ թաքցնեմ, - գլուխը ամոթխած քորում է խելքատերը, - շնորհեցի հարսս գլխի օգեց:

Գյուղով մեկ ուրխաղ են լինում, փառք տալիս Աստծուն, որ իրենց գյուղին չի խնայել ու էդպիսի խելքը հարս է ուղարկել: Ծերերով տեղնուտեղը խորհուրդ են անում, թե ինչ անեն, ոնց անեն, որ էդ մի ճրագ Աստծո պարգև խելքը պահեն-պահպանեն: Տարբեր կարծիքներ են հայտնվում: Ամենից շատ Բեգոն է աչքները վախացնում.

- Տղերք, - ասում է չալիկը տմբտմբացնելով, - ես մեր գեղը լավ գիդեմ, մողիթ կացեք, հանկարծ դրա խելքը գլխիցը չթռչի...

Գլուխներին որ շատ զոռ են տալիս, գտնում են հարցի լուծման ամենակարճ ու ամենաուղղակի ճանապարհը: Զարսին կանգնեցնում են մի հաստաբուն ծառի տակ, բնին քիպ և ուղիղ ճակատի կենտրոնում մի հեյվարա ժանգոտ մեխ խփում:

Դե, թե խելք ես, թռի...

Մենք մտքով հիմա էլ Աբորուց հեռու չենք: Մեր խելքն էլի մեխված է մի տեղում: Թե չէ՞ ես երկիրը ինչի՞ չի տեղից շարժվում... Մինչդեռ թռիչքի համար ծնվածը չի կարող նույն տեղում մնալ: Ո՞վ է լինելու մեր ընտրյալը... Ո՞վ կհանի այդ մեխը... Մեխը... Նմանն այն մեխին, որ մնաց Սև կոթողի «գալակտիկայում»...

# Ալեքսանդր ՄԱՆԹԱՇՈՎ

## Ֆինանսիստը

Նավթի ապագա հայ արքան ծնվել է 1842թ. Թիֆլիսում: Մանթաշովի մանկությունն ու պատանեկությունն անցել են պարսկական Թավրիզ քաղաքում, որտեղ նրա հայրը զբաղվում էր գործվածքեղենի վաճառքով: Լինելով ընտանիքի միակ արու զավակը՝ Ալեքսանդրը մանկուց օգնում էր հորը առևտրային գործերում:

1869թ. նա տեղափոխվում է Մանչեստեր, որն այդ ժամանակ մանուֆակտուրայի խոշոր կենտրոններից էր, որտեղից էլ հորը գործվածքեղեն է մատակարարում: Մանչեստերյան շրջանը կարևոր դեր ունեցավ երիտասարդ Մանթաշովի ձևավորման գործում, այստեղ նա ոչ միայն ծանոթացավ մանուֆակտուրային բիզնեսի այբուբենի հետ, այլ խորասուզվեց եվրոպական բիզնեսի բարդությունների մեջ, հաղորդակից դարձավ անգլիական մշակույթին: Մանթաշովը տիրապետում էր անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն լեզուներին:

1872թ. հայր և որդի Մանթաշովները վերադառնում են Թիֆլիս: Երիվանյան հրապարակի վրա գտնվող «Կովկաս» հյուրանոցի առաջին հարկում նրանք գործվածքեղենի խանութ են բացում, հետո՝ երկրորդը և սկսում են զբաղվել գործվածքեղենի մեծածախ առևտրով: 1887թ., հոր մահից հետո, Ալեքսանդրը գնում է թիֆլիսյան առևտրային բանկի արժեթղթերի մեծ մասը, որը կարևոր դեր ուներ ողջ Կովկասի առևտրում, և դառնում է նրա գլխավոր բաժնետերը, իսկ հետագայում զբաղեցնում է նաև բանկի ադմինիստրատիվ խորհրդի նախագահի պաշտոնը: Ի դեպ, «Տիմկոմ» բանկը Կովկասի միակ ֆինանսական հաստատությունն էր, որի արժեթղթերը գնահատվում էին Մանկտ Պետերբուրգյան բորսայում:

90-ականների սկզբին Մանթաշովը արդեն առաջին գիլդիայի վաճառական էր և Թիֆլիսի Քաղաքային դումայի իրավասու: Յենց այդ ժամանակ էլ նա սկսեց հետաքրքրվել նավթով: Նա ժամանակին նկատեց Բաքվի նավթարդյունաբերության զարգացման հեռանկարները:

## Նավթարդյունաբերողը

Սա համաշխարհային նավթաբիզնեսի ձևավորման շրջանն էր: Ընդերքային սև հեղուկը ձեռներեցներին անհավանական շահույթ և նոր հսկայական հեռանկարներ էր խոստանում: Անհրաժեշտ էր պարզապես փողեր ներդնել և հնտորեն կառավարել գործը: Յենց այդպես էլ արեց Մանթաշովը: Նրա գլխավոր հաշվապահի նախաձեռնությամբ ոչ մի թուղթ գործավարության մեջ չէր մտնում առանց «Աստծով» մակագրության:

Մանթաշովը ռիսկից չէր վախենում: Մի-քայլե Արամյանցի հետ համատեղ գնված վնասաբեր նավթահորերը շատ շուտով սկսեցին շահույթ բերել: Նավթի վերամշակման համար մանթաշովյան ֆիրման



Բաքվում կառուցեց կերոսինի և քայուղերի գործարան, նավահանգիստ և էլեատոր՝ նավթն ու մազուքը պոմպով տեղափոխելու համար: Նրա ֆիրմային էին պատկանում Բաթումիում գտնվող տարներ արտադրող գործարանը և նավթամբարը, Զաբրատում՝ մեխանիկական արհեստանոցը, Օդեսայում՝ նավթատար կայանը և 100 վագոն ցիստեռները, որոնք շրջանառվում էին Ռուսաստանի հարավ-արևմտյան երկաթուղային ճանապարհներում: Մանթաշովը Անգլիայում գնեց 3 տանկերներ, որոնցով նավթը Յնդկաստան, Չինաստան, Ճապոնիա և այլ միջերկրածովյան երկրներ էր մատակարարվում:

1899թ. հիմնվեց «Ալ. Մանթաշով և Կո» առևտրի տունը, որն անմիջապես ներկայացուցչություններ, գրասենյակներ և պահեստներ բացեց Եվրոպայի և Ասիայի ամենախոշոր քաղաքներում՝ Սմիռնայում, Սալոնիկում, Կ.Պոլսում, Կահիրեում, Պորտ Սաիդում, Դամասկոսում, Լոնդոնում, Բոմբեյում և Շանհայում: Շուտով Մանթաշովը դառնում է մի շարք համաշխարհային նավթային ընկերությունների բաժնետեր, որոնց թվում էր «Նոբել եղբայրներ» ընկերությունը: Նավթի ընդհանուր պաշարների 51,3%-ն և Կասպից ծովի նավթի մնացորդների 66,8%-ը կենտրոնացված էին նրա ֆիրմայում: 1904թ. Բաքվի նավթն արդյունահանման ծավալով գիջում էր միայն «Նոբել եղբայրներին» և Ռոտշիլդ եղբայրների «Կասպիական սև-ծովյան ընկերությանը»:

Մի անգամ, երբ Մանթաշովը ճանապարհորդում էր Վիեննա-Փարիզ գնացքով, նրա ուղեկիցը մի քչախոս մարդ էր: Մանթաշովի՝ նրա հետ զրույց տանելու բոլոր փորձերն ապարդյուն են անցնում: Եվ միայն, երբ խոսք է գնում Բաքվի նավթարդյունաբերության մասին, քչախոս ուղեկիցն աշխուժանում է: Զրույցի ընթացքում նա նավթահանման վերաբերյալ մի քանի մասնագիտական հարցեր է տալիս և իմիջիայլոց ասում, որ նրան Բաքվում հայտնի միակ մարդը Ալեքսանդր Մանթաշովն է: Մանթաշովը ծալտում է անծանոթին և ներկայանում: Դրանից հետո զրուցակիցն այլևս չի խոսում: Մի քանի օր հետո Մանթաշովը հայտնի միլիոնատեր բարոն

Ռոտշիլդի կողմից մակագրված աշխարհիկ ընդունելության հրավեր է ստանում: Այդ հրավերի երկտողից Մանթաշովը հասկացավ, թե ով էր իր քչախոս ուղեկիցը:

Մանթաշովը ֆինանսավորեց Բաքու-Բաթումի նավթամուղի շինարարությունը և 1907թ. կառուցեց աշխարհում առաջին 835 կմ երկարություն ունեցող նավթամուղը, իսկ բիզնեսմենին «նավթի արքա» հռչակեցին: 1899-1909թթ. նրա ընկերությունն իր հիմնական կապիտալի ծավալով (22 մլն ռուբլի) ամենախոշորն էր ուսական արդյունաբերության մեջ:

Ասում են, մինչև նավթի հանք գտնելը Մանթաշովն անձամբ էր այն ուսումնասիրում: Նա գիտեր, որ հարուստ հանքատեղին անսպասելիորեն կարող է սպառվել և, հակառակը, անհեռանկարային հորատանցքից նավթի շատրված խփել: Երկրաբանների, նավթագործ մասնագետների, ինժեներների շքախմբով շրջապատված, նա ուսումնասիրում էր հողակտորը, բազմաթիվ հարցեր էր տալիս, ուշադիր զննում էր հողի գույնը, փխրունությունը և այլն, մինչև անգամ հոտոտում էր այն: Յետաքրքրվում էր հարևան հողակտորների վիճակով: Մեկ էլ հանկարծ կանգ էր առնում և ձեռնափայտը գետնին խփելով՝ ասում էր. «Յենց այստեղ էլ հորատեք»: Ոչ ոք չէր կարողանում հասկանալ, թե ինչով էր պայմանավորված տվյալ կետի ընտրությունը: Սակայն նրա որոշումը միշտ վերջնական էր լինում: Իսկ ամենագարմանալին այն էր, որ երբ սկսում էին նրա մշած տեղում հորատել, գետնից նավթի շատըրվան էր խփում:

## Բարերարը

Մանթաշովի ժամանակակից, հայ դասական գրականության ներկայացուցիչ Ալեքսանդր Շիրվանզադեն այսպես է գրել նրա մասին. «Ոչ թե հսկայական գումարներն էին, այլ սիրտը. ահա թե ինչն էր, որ միակ և մեծագույն դերը ունեցավ Մանթաշովի բարեգործական գործունեության մեջ: Նա նվիրատվություններ էր անում ոչ թե սին փառասիրությունից ելնելով, կամ էլ որևէ հետին մտքով, այլ միայն այն պատճառով, որ նրան այդպես էր թելադրում իր զգայուն հոգին, նրա բարեգործությունը իր մեջ իսկական քրիստոնյայի դրոշմ էր կրում: Զախ ձեռքը չգիտե, թե աջն ինչ է տալիս»:

Տասներկու համախոհների հետ նա Թիֆլիսում հիմնում է «Կովկասի հայկական բարեգործական միությունը»: Նա Ներսիսյան հոգևոր ճեմարանի կառուցման համար 300 հազ. ռուբլի է հատկացնում: 1910թ. նա Մայր Աթոռ Սբ. Էջմիածնին հանգանակում է 250 հազ. ռուբլի, որի միջոցներով կառուցվում է Ամենայն Յայոց կաթողիկոսի ներկայիս խորանը (շինարարությունն ավարտվեց 1914թ.):

Մանթաշովը ֆինանսավորեց հիսուն հայ տաղանդավոր երիտասարդների կրթությունը Ռուսաստանի և Եվրոպայի լավագույն ուսումնական հաստատություններում: Նրանցից շատերը հետագայում զարգացրեցին հայկական մշակույթը և գիտությունը, նրանց թվում էր հայ դասական երաժշտու-

թյան հիմնադիր Կոմիտասը:

Սակայն Մանթաշուկի ամենից աչքի ընկնող գործերից է Փարիզի ժամ Գուժոն փողոցի վրա գտնվող Աբ. Յուլիանես Մկրտչի եկեղեցին: Գործարարն այսպես է բացատրել հենց Փարիզում գտնվող հայկական եկեղեցու համար այդքան առատ հանգանակություն անելու իր քայլը. «Սա այն քաղաքն է, որտեղ ես ամենից շատ եմ մեղքեր գործել»: Սա սփյուռքի ամենագեղեցիկ հայկական եկեղեցին է: Դրա կառուցման համար 1904թ. Մանթաշուկը ծախսել է 1 մլն 540 հազ. ֆրանկ, հետո հանձնել իր ժողովրդին: Այս գործի համար Ֆրանսիայի նախագահն Ալեքսանդր Մանթաշուկին պարգևատրել է «Պատվավոր Լեգեոնի շքանշանով»:

### Մարդը

Մանթաշուկը չէր սիրում ի ցույց դնել իր հարստությունը և բավականին համեստ կյանք էր վարում: Նա ոսկի չէր սիրում և

չէր էլ կրում, նրա միակ զարդը պիջակի գրպանի բնական ծաղիկն էր: Թիֆլիսում նա նույնիսկ սեփական կառք չուներ, քանի որ սիրում էր զբոսնել կամ էլ տրամվայով շրջել:

Պատմում են, որ զբոսանքների ժամանակ Մանթաշուկն իր մոտ 20 ոսկե դրամ էր պահում, որը հավասար էր 5 ռուբլու: Ամեն անգամ Թիֆլիսի ռեալական քոլեջի մոտով անցնելիս նա, իբր պատահաբար, մոտենում էր կարիքի մեջ գտնվող աշակերտներին և հետաքրքրվում էր. «Ինչպե՞ս է հորդ առողջությունը: Անպայման կհաղորդես նրան իմ ողջույնը»: Իրականում այս ֆրազը քողարկում էր այն պահը, երբ Մանթաշուկը, շրջապատի համար անցկատ և առանց զրուցակցի հպարտությունը վիրավորելու, նրա գրպանն էր դնում ոսկեդրամ: Դրա հետ մեկտեղ նա բավականին մարդամոտ, աշխույժ և կատակասեր անձնավորություն էր: Սի անգամ, երբ նա վճարում է սափրիչին, վերջինս նկատում է «Ձեր տղան երկու անգամ

շատ է տալիս»: Իսկ Մանթաշուկն այսպես է պատասխանում. «Դե նա Մանթաշուկի որդին է, իսկ ե՞ս ով եմ»:

Նրա նախասիրություններից էր թատրոնը: Հենց Մանթաշուկի միջոցներով էլ կառուցվել «Պիտոկյան թատրոնի» շենքը, որը ներկայումս կրում է Շոթա Ռուսթավելու անունը: Փարիզի «Academic National de Musique»-ում նա սեփական օբյակ ուներ: Մանթաշուկը երազում էր մանաստիպ մի թատրոն կառուցել Երևանում, բայց չհասցրեց: Հայկական ֆիլիհարմոնիկ փոքրիկ դահլիճը քաղաքին արված նրա նվերն է:

Ալեքսանդր Մանթաշուկը մահացել է 1911թ. ապրիլի 19-ին, Սանկտ Պետերբուրգում: Հինգ օր հետո նրա մարմինը տեղափոխել են Թիֆլիս: Նրան հուղարկավորել են կնոջ կողքին, Վիեննական տաճարի դամբարանում, որի գլխավոր եկեղեցիներից մեկի վերականգնումը կատարվել էր նրա հանգանակության շնորհիվ:

**Պատրաստեց Կամո ՍՍԻԼՅԱՆԸ**

## Հեղինակային և հարակից իրավունքների խնդիրները

Հեղինակային իրավունքի պահպանության հիմնական նպատակն է աջակցել ազգային մշակութային ժառանգականության հարստացմանն ու տարածմանը, խթանել ստեղծագործական գործընթացն ու հանրության կայն շրջանների հասցնել ստեղծագործական գործունեության արդյունքները:

Հայաստանում «Հայիեղինակ» ՀԿ-ն այդ ուղղությամբ իրականացնում է տարբեր ծրագրեր, որոնցից մեկն էլ Վանաձորի «Արգիշտի» հյուրանոցային համալիրում անցկացված սեմինար-քննարկումն էր՝ «Հեղինակային և հարակից իրավունքների խնդիրները Հայաստանում» թեմայով: Սեմինարի նախաձեռնողներն էին «Հայիեղինակ» ՀԿ-ն և ԱՄՆ ՄՁԳ «Առևտրային և տնտեսական զարգացման ծրագրեր», «Բերինգ Փոյնթ» կազմակերպությունը:

Բացման խոսքում, ինչպես նշեց ու կարևորեց ՀԿ-ի տնօրեն Սուսաննա Ներսիսյանը, ասվեց, որ բոլոր այն անձինք, ում Աստուծո կողմից շնորհված է ստեղծագործելու ունակությունը, սովորաբար չեն հարմարվում նորմավորված հաստիքային աշխատանքին ու սահմանված աշխատավարձին: Նրանց բարեկեցությունը կարող է ստացվել հանրության կողմից նրանց ստեղծագործությունների օգտագործման հետևանքով:

Այդ պատճառով, յուրաքանչյուր պետություն պետք է հոգա ման անձանց կա-

րիքները: Չէ՞ որ հենց այդ հեղինակների ստեղծագործական գործունեության շնորհիվ է ստեղծվում և զարգանում ազգային մշակույթը:

Մասնակիցներին՝ (որոնց թվում քիչ չէին մեր մշակույթի վաստակաշատ ներկայացուցիչներ՝ ՀՀ վաստակավոր դերասանուհի Ռոզա Մխիթարյան, ճանաչված գրող Հրաչ Սարգսյան, գրող-թարգմանիչ Խորեն Գասպարյան), դերասաններին, նկարիչներին, լրագրողներին և այլոց ողջույնի խոսք հղեց «Բերինգ Փոյնթ»-ի ներկայացուցիչ Տիգրան Ալոյանը: Ապա ներկայացվեցին հիմնական թեմաները: Իսկ թեմաները, որոնցով հանդես եկան «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների և ինտելեկտուալ սեփականության պաշտպանություն» ՀԿ-ի իրավաբան Սասուն Շահնազարյանը, «Հայիեղինակ» ՀԿ-ի տնօրեն Սուսաննա Ներսիսյանը, ՀԿ-ի ներկայացուցիչ Գայանե Հակոբյանը և դրանց շուրջ ծավալված ակտիվ քննարկումը կայն դաշտ հանդիսացավ տեղեկատվական-փոխանակման համար:

Սեմինարի մասնակիցներին տվեցին «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի օրինակներ և համապատասխան գրականություն, սպառիչ պատասխաններ ստացան իրենց ներկայացրած հարցերին:

**Սեփական լրատվություն, Վանաձոր**

### Ամսվա թիվը

Հայաստանում 1 մլն 248 հազար մարդ ապրում է աղքատության մեջ:

ՀՀ բնակչության 19,7 տոկոսի սննդի առնվազն 70 տոկոսը կազմում են հացամթերքն ու կարտոֆիլը:

Անցած տարվա դեկտեմբերի համեմատ այս տարվա առաջին 5 ամիսներին ՀՀ-ում պարենային ապրանքների գները աճել են 10,1 տոկոսով:

### ԱՎԱՆԳՆԵՐ

Հուլիսի սկզբին պատրաստ կլինի ՀԻՄՀ խնայքանկում մինչև 1993թ. հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում ստացողների վերջնական ցանկը: Այն կհաստատվի աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից, որից հետո կսկսվի բաշխումը:

### ԱՅՍՊԵՍ ՀԻ ԿԱՐԵԼԻ ԿԱՌՈՒՅԵԼ

Սեյմակայուն շինարարության հայկական ասոցիացիայի նախագահ պրոֆեսոր Միքայել Մելքունյանը վերջերս «Արմենպրեսի» սրահում տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարել է, որ եթե երևանում տեղի ունենա այնպիսի երկրաշարժ, ինչպիսին տեղի ունեցավ 1988 թվականին Սպիտակում, ապա երևանից ոչինչ չի մնա: «Կլինի շուրջ 300 հազար գոի, շենքերի 80 տոկոսը կքանդվի», - ասել է նա: Ըստ Մ. Մելքունյանի, սեյսմիկ անվտանգության հանգամանքը հաշվի չի առնվել խորհրդային տարիներին և հաշվի չի առնվում նաև ներկայումս իրականացվող «Լիտար» շինարարության ժամանակ:

### Исторические анекдоты

## «Послушайте, юноши, старика...»

Римский император Август прошел в молодости через много испытаний, но затем долго и счастливо правил огромной империей. Во все годы, начиная с молодых, его отличали трезвость оценки ситуации и весьма взвешенное поведение. Как-то, желая успокоить знатных юношей, которые разнузданно и громко галдели, не обращая внимания на окружающих,

он начал так: «Послушайте, юноши, старика, которого юношей слушали даже старики...» Сказано два тысячелетия назад, но как актуально в наши дни, когда опыт старшего поколения не только не востребован, но даже часто подвергается бездумному невежественному осмеянию!

**Роберт ОГАНЯН.**

# ՕԼԻԳԱՐԽՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՐԱՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈՒՄ

Ամեն անգամ, երբ Հայաստան են այցելում, բարեկամներս, ընկերներս առաջին հերթին հրամցնում են նոր անեկոտները հայոց... օլիգարխների մասին: Այն տպավորությունն է ստեղծվում, որ այդ մեծահարուստները, ինչպես ասում են, մարդկանց կոկորդում լռված ձիթապտղի կորիզ են, ոչ կարողանում են կուլ տալ-մարսել, ոչ էլ թթել-դուրս գցել: Ուստի բավարարվում են սրամտություններով: Այդ անեկոտները չար են, խայթիչ, արհամարհական, բայց ամենատարօրինակն այն է, որ հերոսները փայլում են իրենց... բթամտությամբ, ինչը խիստ կասկածելի է: Բայց, անտարակույս, նրանք արդեն ամուր կերպով մտել են ժողովրդական ֆոլկլորի մեջ և կազմել հայ ազգի նորօրյա բանահյուսության անբակտելի մասը:

Ասել, թե Ռուսաստանում օլիգարխներին սիրում են, պատմական անարդարություն կլիներ: Կոմունիստներն ու նացիոնալիստներն ատելով-ատում են, որովհետև նրանց մեջ շատ են իրենաները: Լիբերալները նրանց համարում են իրենց «դեմոկրատական» ստեղծագործությունները, և եթե իրենք դրամապանակ չունեն, ապա հաճույքով օգտվում են նրանց քսակներից: Իսկ ի՞նչ է մնում հասարակ ժողովրդին՝ միայն նախանձել:

Այստեղ էլ են օլիգարխներին փնտրում, համարում են խարդախ, խաբեբա, ավագակ և այլն, բայց ոչ երբեք բթամիտ: Եթե համեմատենք հայ և ռուսաստանցի «աֆերիստներին», ապա կտեսնենք, որ, օբյեկտիվորեն, համեմատության եզր չկա: Բնականաբար, դա առաջին հերթին վերաբերում է մասշտաբներին: Ես չգիտեմ, ասենք, ինչքա՞ն է Հայաստանի բյուջեն: Բայց հաստատ 18,3 միլիարդ դոլար չէ. իսկ այդքան է հենց միայն «Ֆորբս» ամսագրի Ռուսաստանի 100 մեծահարուստների վերջին ցուցակի առաջատարի Չուկոտկայի «պետ» Ռոման Աբրամովիչի հարստությունը: Իսկ գիտե՞ք ինչքան է այդ «ոսկե հարյուրյակի» ամփոփիչ գումարը՝ 248 միլիարդ դոլար:

Երկու տարի առաջ ակումբի մուտքի «տոմսն» արժեք 280 միլիոն, այսօր «ամենաաղքատ» միլիոնատերը տնօրինում է... 450 միլիոն դոլար: Իսկ առաջին տասնյակին անդամագրվելու համար պետք է ունենալ առնվազն 7,6 միլիարդ դոլար: Երկի սրանց համեմատ հայ օլիգարխներին չքավոր կարելի է համարել: Ռուսաստանում ապշեցնում են նաև հարստության աճի դինա-

միկան ու ծավալները: Հազիվ թե հայ օլիգարխները հնարավորություն ունենան կարճ ժամանակահատվածում բազմապատկելու իրենց ունեցվածքը: Իսկ ահա էթնիկ ադրբեջանցի Վազիտ Ալեքսանդրովը, որը «Ֆորբսի» նախորդ ցուցակում սոսկ 10-րդն էր, այժմ գրավում է պատվավոր 2-րդ տեղը, զիջելով միայն Աբրամովիչին: Նրա գլխավորած «ԼՈՒԿՕՅԼ» նավթային ընկերության կապիտալացումը մեկ տարում աճել է 150 տոկոսով, Ալեքսանդրովի հարստությունը հասցնելով 12,7 միլիարդ դոլարի: Բիզնեսի տեսակների առումով էլ, նույնպես օբյեկտիվորեն, մեծ են տարբերությունները: Ռուսաստանում այն կարծիքն է ստեղծվել, որ հայ բիզնեսմենները հեջ «մասնագիտացում» չունեն, նրանց համար կարևոր չէ, թե ինչով են զբաղվում, գլխավորն այն է, որ գործը եկամուտ բերի: Ռուսաստանում հակառակն է. օլիգարխները ընտրում են որոշակի ուղղություն և նոր դրա հիման վրա կարող են զարգացնել որոշ օժանդակ ճյուղեր: Առաջմ նրանք զբաղվում են երկրի բնական հարստությունների վայրենի շահագործմամբ, ֆինանսներով, բանկերով, անշարժ գույքով: Ռուսաստանն առ այսօր այդպես էլ չծնեց իր Բիլլ Գեյթսին. շատ քիչ մարդ է զբաղվում արտադրությամբ, նորագույն տեխնոլոգիաներով:

Ելնելով հիշատակված անեկոտների «յուրահատկություններին», նույնիսկ անպատեհ է դառնում երկու երկրների մեծահարուստների կրթվածության համադրումը: Ռուսաստանցիները բոլորն էլ հիմնովին կրթություն ունեն, աչքի են ընկնում ինտելեկտուալ բարձր մակարդակով, սկսում են հավասարվել համաշխարհային բիզնեսի ընտրախավին: Հետաքրքրական է, որ նրանցից շատերն անցել են կուսակցական, կոմերիտական, կառավարչական աշխատանքի այն տարիների համար «մեմբերական» մեծ դպրոց: Ձախելների մեջ շատ են արտասահմանյան հեղինակավոր կրթական հաստատություններ ավարտածները:

Սակայն հերիք է տարբերությունների մասին. իսկ ընդհանրություններ կա՞ն: Ամենաաղաղակողը... ցուցամուրությունն է (иэ ррәэи в кнәэи): Ռուսների աչքի փուշն են դարձել Աբրամովիչի անգլիական ֆուտբոլային ակումբը, թանկարժեք զբոսանավերն ու ինքնաթիռները: Հա՛, քիչ էր մնում մոռանալիքը... դղյակները:  
**Ռուբեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

## ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՀԵՐՈՄՆԵՐԸ

Հեղինակավոր «Ֆորբս» ամսագրի ռուսական տարբերակը հրապարակել է Ռուսաստանի 100 ամենահարուստ գործարարների ցուցակը: Կարծում ենք, այն կհետաքրքրի նաև մեր ընթերցողներին, սակայն ծավալի՝ չափից դուրս մեծ լինելու պատճառով մենք կներկայացնենք միայն առաջին տասնյակում տեղ զբաղեցրած գործարարներին:

100 ամենահարուստ մարդկանց ցուցակում տեղ է գտել հայազգի միայն մեկ գործարար՝ 34-ամյա Դանիլ Խաչատուրովը: Վերջինիս մենք կանդորադառնանք ավելի մանրամասն: Նշենք, որ «Ֆորբսի» մասնագետները հաշվարկներ կատարելիս առաջնորդվում են ոչ թե գործարարների բանկային հաշիվներում եղած գումարներով, այլ նրանց բիզնեսի արժեքով: Իսկ վերջինս հաշվարկվում է տարբեր ընկերություններում գործարարների ունեցած արժեթղթերի գնի հիման վրա: Սեփականության արժեքը որոշվում է ֆոնդային բորսայում այդ արժեթղթերի շուկայական գնով: Այս դեպքում հիմք են վերցվել 2006թ. մարտի 24-ի տվյալները:

Մասնագետները հաշվարկներ կատարելիս հիմնվում են նաև գործարարների ընտանիքի անդամների և մոտ հարազատների ունեցվածքի վրա, քանի որ սեփականությունն ուրիշի անունով գրանցելը հատուկ է ոչ միայն Հայաստանին: Այս ամենով համոզե՞րձ «Ֆորբսի» մասնագետները հիշեցնում են, որ ցուցակի տվյալները փորձագիտական և լրագրողական զննատման արդյունք են, և ներկայացված տեղեկատվությունը պաշտոնական չէ: Այժմ տեսնենք՝ ինչ պատկեր է ստացվել:

«Ոսկե հարյուրյակ» ոչ պաշտոնական ակումբի անդամների ընդհանուր կարողությունը մեկ տարվա ընթացքում աճել է մոտ 2 անգամ և կազմում է 248 մլրդ ԱՄՆ դոլար: Այս ակումբի «ամենաեղևած մուտքի տոմսն» արժե 450 մլն դոլար: Առաջին տասնյակում տեղ գրավելու համար հարկավոր է ունենալ 7,6 միլիարդից ոչ պակաս կարողություն: Այդ մարդկանց կարող էք ծանոթանալ ստորև բերված ցուցակում, որն, իհարկե, գլխավորում է Ռոման Աբրամովիչը:

- |   |  |   |
|---|--|---|
| 1. Ռոման Աբրամովիչ 18.3 մլրդ դոլար (Նավթ, այլու-մին) 39 տարեկան, ամուսնացած է, ունի 5 երեխա | երեխա  | 8. Վլադիմիր Եվտուշենկով 7.7 մլրդ դոլար (Կապ, էլեկտրոնիկա, ֆինանսներ) 57 տարեկան, ամուսնացած է, ունի 2 երեխա |
| 2. Վազիտ Ալեքսանդրով 12.7 մլրդ դոլար (Նավթ) 55 տարեկան, ամուսնացած է, ունի որդի             | 5. Վիկտոր Վեկսելբերգ 10.1 մլրդ դոլար (Նավթ, գունավոր մետալուրգիա) 49 տարեկան, ամուսնացած է, ունի 2 երեխա | 9. Վլադիմիր Պոտանին 7.6 մլրդ դոլար (Գունավոր մետալուրգիա) 45 տարեկան, ամուսնացած է, ունի 3 երեխա            |
| 3. Վլադիմիր Լիսին 11.3 մլրդ դոլար (Սև մետալուրգիա) 50 տարեկան, ամուսնացած է, ունի 3 երեխա   | 6. Օլեգ Դերիպասկա 9 մլրդ դոլար (Գունավոր մետալուրգիա) 38 տարեկան, ամուսնացած է, ունի 2 երեխա             | 10. Սիխայի Պոխոտով 7.6 մլրդ դոլար (Գունավոր մետալուրգիա) 41 տարեկան, ամուրի                                 |
| 4. Սիխայի Ֆրիդման 10.4 մլրդ դոլար (Նավթ, ֆինանսներ, կապ) 42 տարեկան, ամուսնացած է, ունի 2   | 7. Ալեքսեյ Սորոչաշով 8.5 մլրդ դոլար (Սև մետալուրգիա) 40 տարեկան, ամուսնացած է, ունի 3 երեխա              |   |

# ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ

## Ես լուսանկարներով չեմ հպարտանում

Այսպես է ասում մեր հայրենակից Դանիլ Խաչատուրովը: 34-ամյա գործարարը, որը զբաղվում է ֆինանսներով և անշարժ գույքով, «Ֆորբսի» զնահատմամբ ունի 760 մլն դոլարի կարողություն: Նա զբաղեցնում է «ոսկե հարյուրյակի» 65-րդ տեղը:

Դանիլ Խաչատուրովի ման գործարարների կենսագրությունը, մանավանդ՝ կարիերային վերաբերող մասը, միշտ էլ հետաքրքիր է հանրությանը: Դա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ նրա հարստության «նախասկզբնական» կուտակումը չի եղել պլան-թալանի միջոցով, ինչպես շատերին: Գիշտ է ասել, թե վերջինս քրտնաջան աշխատել է սուտ կլիմի: Բուրդն էլ գիտեն, որ քրտինքով հնարավոր չէ միլիոններ աշխատել: Սակայն այն, որ երիտասարդ գործարարը բավական ճկուն քաղաքականություն է վարել և ցուցաբերել է նուրբ հոտառություն, անվիճելի փաստ է:

Դանիլ Խաչատուրովը ծնվել է Մոսկվայում 1971թ.: Ավարտել է Մոսկվայի ինժեներա-շինարարական ինստիտուտը և ՌԴ կառավարությունը կից ֆինանսական ակադեմիան: Ծովային բաժնետիրական բանկում աշխատել է որպես ավագ տնտեսագետ: 1997-2000թթ. ընթացքում փոխնախագահի, իսկ հետո ավագ փոխնախագահի պաշտոնում ղեկավարել է «Բին» ընկերության ներդրումային և ֆինանսական քաղաքականությունը: 2000-2002թթ. եղել է «Սլավնավո» ընկերության փոխնախագահը: 2002թ. մայիսից «ՌոսԳոսՍտրախ» ԲԲԸ գլխավոր տնօրենի խորհրդակազմ էր: Նույն թվականի հուլիսին նշանակվում է «ՌոսԳոսՍտրախի» գործադիր տնօրեն: 2004թ. ապրիլի 1-ից այդ ընկերության գլխավոր տնօրենն է:

Այս ժլատ տեղեկություններն, իհարկե, ոչինչ չեն ասում այն մասին, թե ինչպես է Խաչատուրովն իր կարողությունը հասցրել 760 մլն-ի: Իսկ այդ վերելքը սկսվել է 2001թ. ապրիլից: Պետական «Սլավնավո» երիտասարդ թուփ-մենեջերը գնաց ռիսկի՝ մի քանի միլիոն դոլարով վճարելով «ՌոսԳոսՍտրախի» 9% բաժնետոմսերի համար: Հետագայում Խաչատուրովն ու իր գործընկերները հասկացան, որ այդ ներդրումը ոչ թե լինելու է պորտֆելային, այլ ռազմավարական: 2003թ. ամռանը նրանց էր պատկանում այս ընկերության բաժնետոմսերի 75%-ը:

Իսկ ինչպե՞ս է Դ. Խաչատուրովը կուտակել նախնական կապիտալը, որն անհրաժեշտ է նման ներդրումների համար: Իր իսկ խոսքերով, կապիտալի հիմքը արժեթղթերն են՝ բաժնետոմսերը, մուրհակները, պետական պարտատոմսերը և այլն:

«Եթե նկատեցիք, իմ աշխատանքային սեղանին դրված մոնիտորներին մեկը «ՌԱՅ»-ի (Ռուսական առևտրային համակարգ - Բ.Թ.) մոնիտորն է: Ես առևտուր եմ արել և անում եմ մինչև հիմա», - sostav.ru



կայքէջին տված հարցազրույցում ասել է Դանիլ Խաչատուրովը: Խոսքը գնում է արժեթղթերի առքուվաճառքի մասին: Քանի որ այդ շուկան Հայաստանում գրեթե չի գործում, մեջբերենք հենց գործարարի խոսքերը, որից պարզ կդառնա, թե ինչպես կարելի է առանց մեծ ջանքերի միլիոններ աշխատել:

«Բերեն մի օրինակ, ինչպես ես կարողացա շատ փող աշխատել: 2000թ. սկզբում եկա «Սլավնավո» և ձեռք բերեցի դրա դուստր ընկերություններից մեկի՝ «Մե-գիոնավթագազի» բաժնետոմսերի լուրջ փաթեթ: Ես ընդամենը գիտեի, որ լավ եմ աշխատելու, գիտեի թիմին և համոզված էի, որ նախագահը Միխայիլ Գուցերիևը, կանգ չի առնի և միշտ առաջ կընթանա: Արդյունքում, իմ գալու ժամանակ «Մե-գիոնավթագազի» բաժնետոմսն արժեք 1 դոլար, իսկ դուրս գալու ժամանակ՝ 15 դոլար: Այսօր այն արժե արդեն 20 դոլար», - ասում է Խաչատուրովը:

Վերջինս այնպիսի թեթևությամբ և հունորով է խոսում միլիոններ աշխատելու մասին, որ մի պահ թվում է բոլորն էլ կարող են դա անել: Օրինակ, «ՌոսԳոսՍտրախի» գործարքը, Խաչատուրովի խոսքերով, ազարտի արդյունք է: Սկզբում նա և իր գործընկեր Ռուբեն Վարդանյանը («Տրոյյա Դիալոգ») որոշել են ձեռք բերել արգելանքի իրավունք տվող 9%-ը՝ հետագայում այն վաճառելու նպատակով: Իսկ հետո, երբ պետությունը վաճառքի է հանել ընկերության և 40% բաժնետոմսերը, երիտասարդ գործարարները որոշել են չբավարարվել և փորձել «կյանքի կոչել իսկա դինոզավրին»: Խաչատուրովի կարծիքով՝ ֆինանսիստի համար նախապես անհրաժեշտ 30-50 մլն դոլար ճարելը ղեկավար չէ: Դժվարը այն ետ վերադարձնելն է: Գործարարը խոստովանում է, որ իրենք մեծ ռիսկի են գնացել: Ով ռիսկի չի գնում, նա, ինչպես գիտեք, շամպայն չի խմում: Իսկ Խաչատուրովը վախեցողներից չէ: Այս մարդու մտածելակերպի մասին ավելի լիարժեք պատկերացում կազմելու համար ձեզ ենք ներկայացնում «Ֆորբսին» տված նրա հարցազրույցը:

- **Ձեզ մոտ խնդիրներ չե՞ն առաջանում ձեր նպատակները հստակեցնելու հարցում: Ահա, դուք աշխատեցիք ձեր առա-**

**ջին միլիոնը, հետո՝ առաջին տաս միլիոնը: Հետո՞ ինչ է լինելու:**

Դ. Խ. - Ես դրամական համարժեքով արտահայտված նպատակներ չունեմ: Եթե ինքդ քո առջև այդպիսի նպատակներ դնես, ապա այն օրը, երբ հասկանաս, որ կարող ես ուզածդ ամեն ինչը գնել, ամեն ինչ կկորցնի հետաքրքրությունը: Ես ուզում եմ այնպես անել, որ իմ ղեկավարած ընկերությունը դառնա առաջինը ոչ միայն Ռուսաստանում:

- **Դա հասկանալի է: Ես ցանկանում էի հարցնել՝ ձեր ինչի՞ն է պետք այդ ամենը:**

Դ. Խ. - Ուզում եք հասկանալ՝ ինչն է ինձ ստիպում վեր կենալ և զնալ աշխատանքի: Ինձ չի հուզում մեծ ինքնաթիռ կամ մեծ տուն գնելու հնարավորությունը: Իմ ոգևորության արդյունքը «ՌոսԳոսՍտրախն» է, արթնանում եմ միայն դրա համար: Մեր ընկերությունում աշխատում է 10000 մարդ: Մենք պետք է լինենք լավագույնը, ես պետք է նրանց լավագույնը դարձնեմ: Դա պարտականություն է, որը ես դրել եմ ինքս իմ առջև: Պետք է ապացուցեմ ինքս ինձ, որ այս գործը կարող եմ հաջողությամբ գլուխ բերել: Մենք արդեն շատ բան ենք ապացուցել, բայց դա ամենը չէ: Իմ ներքին մոտիվացիան այժմ շատ է բարդացել: Ես պետք է իմ մարդկանց ապացուցեմ, որ մենք չեխերից, լեհերից և մյուսներից վատ չենք և ապագայում նույնպես հաղթանակներ ենք տանելու: Օրինակ, ես որոշեցի զբաղվել հոկեյով, հովանավորել Մոսկվայի «Դինամոյին»: Եվ թիմը դարձավ Ռուսաստանի չեմպիոն: Եթե մենք ենք հովանավորը, թիմը պետք է լինի առաջին տեղում: Այս տարի «Դինամոն» համրդես է գալիս արդեն առանց մեզ, մենք մեր առաքելությունն ավարտեցինք:

- **Այսինքն՝ ձեզ առաջ է մղում առաջինը լինելու ծարա՞վը:**

Դ. Խ. - 100 տոկոսով, ինչպես ցանկացած տղամարդու:

- **Առաջինը լինելու համար անհրաժեշտ է ամեն օր ցուցաբերել ֆանտաստիկ կամային հատկանիշներ...**

Դ. Խ. - Եթե պարտականություն ես ստանձնել լինել լավագույնը, ապա ուրիշ ելք չկա: Հիշում եմ, երբ Օսկար Դե Լա Յոյան (բռնցքամարտի չեմպիոն - Բ.Թ.) հերթական անգամ ռիսկ դուրս եկավ իր տիտղոսը պաշտպանելու համար, մեկնաբանն ասաց՝ չեմ հասկանում, ի՞նչն է այս մարդուն ստիպում գլուխը դնել հարվածների տարափի տակ, եթե նրա կարողությունը գերազանցում է 150 մլն դոլարը: Այնինչ, նա պետք է ապացուցեր առաջին հերթին ինքն իրեն, որ այսօր էլ լավագույնն է: Կան մարդիկ, որոնք պահպանում են այն լուսանկարները, որտեղ իրենք պատկերված են հայտնի մարդկանց հետ: Դա նրանց հիշեցնում է, որ ժամանակին հաջողակ էին: Ես այդպես չեմ անում:

**Բարկեն ԹՈՒՆՅԱԼ**

# Էդվարդ Խլղաթյանի երգաշարը

Նախախնամությունը մարդկային ցեղի մի որոշ մասին պարզել է բարու և զեղեցիկի ստեղծման տաղանդ ու ձգտում:

Այդպիսի մարդիկ հանդիսանում են հասարակության զարդը: Իմ ճանաչած մարդը՝ Էդվարդ Խլղաթյանը, հոյակապ մարդ և լավ ընկեր է, մի անկրկնելի հայ, հոգով հարուստ մարդ, որը ջերմությամբ և մարդկային վերաբերմունքով իր շուրջն է հավաքում մտավորականներին՝ նկարիչներին, գրողներին, թատրոնի և երգարվեստի մարդկանց:

Էդվարդ Խլղաթյանը մի շարք երգերի հեղինակ է, որոնք նվիրված են մորը, հորը, եղբորը և երեխաներին: Այդ երգերը կատարում են ոչ միայն մեր քաղաքի երգիչ-երգչուհիները, այլև հանրապետությունում ճանաչված կատարողներ:

**Լենա ԱՆՁԱՌԱՆՅԱՆ**

*Ստ. Ջորյանի անվ. տուն բանգարանի տնօրեն, բանաստեղծուհի*

## ՄԱՅՐԻԿ

Չեմ մոլորվի ես կյանքում,  
Քանի դու կաս, լուսեղեն,  
Մայր իմ, քո հոգու խորքում  
Արեգակներ եմ պեղել:

Մայրական սերդ հրկեզ,  
Սուրբ է օրհնանքը հոգուդ,  
Վշտացրել եմ եթե քեզ,  
Ներիր, մայրիկ, քո որդուն:

Մեծացել եմ և անգամ,  
Չյուն է իջել քունքերիս,  
Աղոթքի պես պահապան,  
Քո անունն է շուրթերիս:

Մայրական սերդ հրկեզ,  
Սուրբ է օրհնանքը հոգուդ,  
Վշտացրել եմ եթե քեզ,  
Ներիր, մայրիկ, քո որդուն:

Իմ անման, դու իմ լավ,  
Դու մշտապես իմ գարուն,  
Աստծո Աստվածն էլ իրավ  
Մայրն է անգին, սրբանուն:

Մայրական սերդ հրկեզ,  
Սուրբ է օրհնանքը հոգուդ,  
Վշտացրել եմ եթե քեզ,  
Ներիր, մայրիկ, քո որդուն:

## ԱՆՑԱԾ ՈՒՂԻՆ

Ամեն մարդուն էլ հայր է հարկավոր,  
Իմաստուն խոսք է, իզուր չէ սաված,  
Իր անցած ուղով մի բաց գիրք է նա,  
Ուղեցույց է նա, խորհուրդ է որդոց:


Քո անցած ուղին, հայր իմ պատվելի,  
Որդուդ համար միշտ դպրատուն է մի:  
Երբ է օջախը կանգուն, ասացե՛ք,  
Երբ որդին հոր պես իր ազգը սիրի:

Տոհմաձառիս ամուր մի ճյուղն ես դու,  
Ոսկե մի ճյուղն ես, դու անգին իմ հայր,  
Քո բռների հպարտությունն ես դու,  
Սրտիս խորքում անթելված ես միշտ, հայր:

Քո անցած ուղին, հայր իմ պատվելի,  
Որդուդ համար միշտ դպրատուն է մի:  
Երբ է օջախը կանգուն, ասացե՛ք,  
Երբ որդին հոր պես իր ազգը սիրի:

Ազգաշեն գործ ես արել, դու, հայր իմ,  
Դպրության գործին սատար ես կանգնել,  
Հայրենի գյուղում գողտրիկ ու սիրուն,  
Քո արդար ձեռքով դպրոց ես հիմնել:

Հայրենապաշտպան գինվոր ես եղել,  
Մաքառումների միջով ես անցել,  
Փառքով ու պատվով դու տուն ես դարձել,



Կրթության արդար գործին ես լծվել:

Քո անցած ուղին, հայր իմ պատվելի,  
Որդուդ համար միշտ դպրատուն է մի:  
Երբ է օջախը կանգուն, ասացե՛ք,  
Երբ որդին հոր պես իր ազգը սիրի:

## ՀՐԱՇԲ

Մի հավատացե՛ք Դուք բոլոր նրանց,  
Ովքեր պնդում են թե հրաշք չկա,  
Հրաշք է կյանքը Աստծո պարգևած,  
Հրաշք, տեսնելու ցանկություն թե կա:  
Հրաշք է կյանքը Աստծո պարգևած,  
Հրաշք, տեսնելու ցանկություն թե կա:

Հրաշք չէր միթե տունն այս կիսաբանդ,  
Որ դպրոց դարձավ այսօր մեծավանդ,  
Դարձավ մեծ կառույց, դարձավ հարազատ  
Հրաշք ձեռքերով հրաշք պարգևած:  
Դարձավ մեծ կառույց, դարձավ հարազատ  
Հրաշք ձեռքերով հրաշք պարգևած:

Ինքդ քո աչքից չընկնելու համար  
Փակիր աչքերդ, ձեռքդ դիր սրտիդ,  
Աղոթիր Աստծուն ուսուցչի համար,  
Որն իր ողջ կյանքում ապավեն դարձավ,  
Կրթեց սերունդներ՝ պատվով կրելով  
Պարտավորեցնող կոչումն ուսուցչի:

Մի հավատացե՛ք մարդկանց վատատես,  
Ովքեր պնդում են, որ հրաշք չկա,  
Դեռ շատ սերունդներ ավանդն իր կտա,  
Ազատ Խլղաթյան անունն այդ հրաշք:  
Թե հրաշք աչքով աշխարհին նայես,  
Դեռ շատ սերունդներ ավանդն իր կտա:

Հրաշք չէր միթե տունն այս կիսաբանդ,  
Որ դպրոց դարձավ այսօր մեծավանդ,  
Դարձավ մեծ կառույց, դարձավ հարազատ  
Հրաշք ձեռքերով հրաշք պարգևած:  
Դարձավ մեծ կառույց, դարձավ հարազատ  
Հրաշք ձեռքերով հրաշք պարգևած:

\* \* \*

Հայաստանի թագն ես անգին,  
Սուրբ բնաշխարհի իմ Գուգարք,  
Անպարտ է քո հերոս ոգին,  
Քո անցյալին հազար փառք:

*Կրկներգ*- Քաջակրող մեր պապերի  
Փառք ու պատվին տիրանանք,  
Հանուն Գուգարաց աշխարհի,  
Միավորվենք, զորանանք:

Չավակներդ լեռ կշռեն  
Ունենք հավատ, ունենք կամք,  
Ուժ ես տալիս աշխարհաշեն,  
Քո ներկային հազար փառք:

*Կրկներգ*- Քաջակրող մեր պապերի  
Փառք ու պատվին տիրանանք,  
Հանուն Գուգարաց աշխարհի,  
Միավորվենք, զորանանք:

Լուսաբացդ նոր պիտի գա,  
Նվիրումով, սիրով թանկ,  
Հգոր երթիդ վախճան չկա,  
Ապագայիդ հազար փառք:

*Կրկներգ*- Քաջակրող մեր պապերի  
Փառք ու պատվին տիրանանք,  
Հանուն Գուգարաց աշխարհի,  
Միավորվենք, զորանանք:

**Երբ մարդը մտորում է ինքն իր հետ,  
այդժամ սկսվում է իսկական ու գու-  
նագեղ մի պատմություն:**

Այդ պատմությունը ժապավենի նման  
սկսում է ակորդել յուրաքանչյուր մի  
ակնթարթ, յուրաքանչյուր մի պահ, յու-  
րաքանչյուր մի վայրկյան: Էլ հենց այդ  
պահին է, որ դու մնում ես մենակ՝ քո  
մտքերի ու ինքդ քեզ հետ:

Էդվարդ Խլղաթյանի տաղերում նմա-  
նատիպ մի պայթյալ է՝ ծնված երեկոնե-  
րում: Կարելի է ասել ինքնակենսա-  
գրություն, սիրո նվիրում, հայրենասի-  
րություն, եղբայրական սեր, մայրա-  
կան սիրո զգացում, հայրական օջախի  
կարոտ:

Այս պատմությունները յուրաքանչ-  
յուրն էլ հարազատ են հեղինակի հա-  
մար, և յուրաքանչյուրն էլ երգ դառ-  
նալիս ընկալվում են յուրովի:

*Էջը պատրաստեց՝ Լևոն ԽԱՉԱՏՐՅԱՆԸ*

# Որպես ճանապարհ և ճակատագիր

Կան անհատներ, որոնց հսկայական ներդրումն իրենց նախընտրած բնագավառում ժամանակի ընթացքում ավելի ու ավելի հստակ է ուրվագծվում: Հայկական ըմբշամարտին մատուցած իր անուրանալի ծառայություններով հանրապետության եզակի դեմքերից է Կանաձորի օլիմպիական հերթափոխի մենապայքարային մարզածևերի մարզադպրոցի ըմբշամարտի մարզիչ, Լոռվա մարզի ազատ ոճի ըմբշամարտի հավաքականի ավագ մարզիչ Ժորա Հովհաննիսյանը:

Կյանքում հազար ու մի ճանապարհներ կան: Երանելին ճիշտ ապրելու ուղին է, որքան էլ այն դժվարին լինի:

Մարդկային երջանկությունը, սակայն, ազնիվ վաստակից է ծնվում, իսկ վաստակը երկարամյա աշխատանքի խտացումն է: Այսպիսի խոհեր ծնվեցին վետերան մարզիկ-մարզիչ Ժորա Հովհաննիսյանի հետ մեր գրույցի ժամանակ:

Նրա հանգիստ ու հավասարակշռված բնավորության մեջ առկա է առաջին հայացքից աննկատ մի կարևոր գիծ՝ համառությունը, տեղի չտալու կամքը: Համոզված են՝ դա հենց ըմբշամարտիկի բնավորության ամենագորեղ հատկանիշն է, որ այսօր, ի թիվս այլ արժանիքների, վետերան մարզիկ-մարզիչը հաղորդում է իր սաներին: Հարյուրավոր երեխաներ են անցել նրա հայացքի աջևով և սրտի միջով: Իհարկե, ոչ բոլորն են իսկական ըմբշամարտիկ դարձել՝ հասնելով մարզական մեծ բարձունքների, և դա բնական է: Կարևորն այն է, որ նրանցից շատերը կտրվել են փողոցից, ձեռք բերել բնավորության դրական, կայուն գծեր: Ժորա Հովհաննիսյանի համոզմամբ կարևորն այն է, որ իր սաները իսկական մարդ են դառնում՝ հավասարակշռված, կայուն բնավորությամբ, հասարակության մեջ դեր ու կշիռ ունեցող մարդիկ:

Դե իսկ համեստությունը զարդարում է նրա ողջ էությունը: Նրա մեջ՝ հոգում ու սրտում, զարմանալի ներդաշնակությամբ միա-



Ժորա Հովհաննիսյան

հյուսված են պատանեկան ու երիտասարդական տարիների հուշերն ու ապրումները, և փորձաշատ մարդու խոհերը նրա կյանքի գլխավոր էջերն են. դրանք են ըմբշամարտն ու մարզչությունը:

Այս մարզածևով ապրելու արդյունքն է, որ նա այսօր անթաքույց հպարտանում է իր ձեռքբերումներով: Իսկ հպարտանալու առիթ կա: Այդ առիթներից մեկն էլ ներկայացավ վերջերս, երբ Ժորա Հովհաննիսյանը Հարավ Աֆրիկյան Հանրապետության Էլիզաբեթ պորտում կայացած վետերան մարզիկների մեծ փառատոնում նվաճել է ոսկե մեդալ:

Այսբա՞նը... մինչ այս նվաճումը Ժորա Հովհաննիսյանը քառակի հաղթող է վետերանների աշխարհի առաջնություններում. 2002 թվականին Իրանում, 2003-ին Հունգարիայում, 2004-ին Պրահայում, 2005-ին Թեհրանում, ԽՍՀՄ առաջնությունների հնգակի մրցանակակիր է:

Ժորան իր խորին շնորհակալությունն է հայտնում աշխարհահռչակ ըմբիշ Ստեփան Սարգսյանին և Աժ պատգամավոր Աշոտ Աղաբաբյանին, ովքեր օգնեցին նրան մասնակցելու հիշյալ մրցաշարին:


- Եվ իհարկե, շնորհակալությունը ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանին, ով այսօր մեծ ուշադրություն է դարձնում և մարզածևին և մարզիչներին ու մարզիկների հոգսերին:

Ժորա Հովհաննիսյան մարզիչն իրավունք ունի հպարտանալու իր սաներով: Նա պատրաստել է մի շարք առաջնակարգ ըմբիշներ. Աթենքի օլիմպիական խաղերի մասնակից, միջազգային տարբեր մրցաշարերի մրցանակակիր Ժիրայր Հովհաննիսյան, Եվրոպայի պատանիների չեմպիոն, միջազգային մրցաշարերի հաղթող ու մրցանակակիր Օհան Գիքինյան, աշխարհի և Եվրոպայի երիտասարդական առաջնությունների մասնակից ու մրցանակակիր Արարատ Սարգսյան, Հայկ եղջատյան, Արեն Սեդրաբյան, որոնք տոն են տվել ու տալիս են աշխարհի, Եվրոպայի, օլիմպիական մրցաշարերին:

Այսօր էլ վետերան մարզիկ-մարզիչը յուրաքանչյուր տաղանդ բացահայտելիս հայտնագործություն անելուն համագոր ապրումներ է ունենում: Չէ՞ որ հայկական ըմբշամարտի վաղվա օրն այդ պատանիների անվան հետ է կապվելու: Սոցիալական վայրիվերումների մեր այս ժամանակաշրջանում դժվարություններից չի տրտնջում. երջանիկ մարզիչ է համարում իրեն:

Այսպիսին է Ժորա Հովհաննիսյանի ընտրած ճանապարհը, որը նրա համար ճակատագիր է դարձել:

**Լևոն ԽԱՉԱՏՐՅԱՆ**  
Վանաձոր – Կալուգա



Ճապոնացի ըմբիշ, օլիմպիական խաղերի չեմպիոն Կ. Վականաբեն ու Ժ. Հովհաննիսյանը վաղեմի ընկերներ են



Իր սաների՝ որդու Ժիրայրի և Արարատ Սարգսյանի հետ

## Орел - символ храбрости и силы государства

«Орел - символ храбрости и силы государства», - отметил скульптор Гагик Степанян, и именно такой памятник он всегда желал воздвигнуть в память воинов, погибших во время Карабахской войны.

«Причем это обязательно должен быть памятник не для конкретного человека, а для всех тех, кто отдал свою жизнь во имя Родины». Несколько лет скульптор размышлял над своим проектом. И наконец идея сумела реализоваться тогда, когда он познакомился с главой деревни Воскепар (округ Веди) Саркисом Абраамяном. Тогда Г. Степанян узнал о желании жителей деревни поставить памятник. Ведь они имели одиннадцать погибших на войне солдат, а для деревни это большая потеря.

Но Гагик Степанян не просто вынашивал долгое время эту идею. «Когда-то для себя, - рассказывает скульптор, - задолго до встречи с Саркисом Абраамяном я высек из камня орла, который в своих когтях держал венок славы. Венок для героически сражавшихся во время Карабахского движения воинов, которые обесмертили свои имена храбростью. Именно таким мне хотелось видеть свое произведение. И я решил показать задумку



С. Абраамяну. Идея была встречена с восторгом. И вскоре я приступил к делу с новым вдохновением».

Г. Степанян далее рассказывает о проблемах, с которыми ему пришлось столкнуться при работе. С большим трудом удалось достать камни определенной величины. Памятник состоит из трех частей, его высота - 4м 9 см. Помимо всего, очень

сложно было определить место, где конкретно его можно было установить. Необходимо было постараться, чтобы он правильно вписался в местность и совпадал с другими архитектурными строениями. В конце концов было решено установить его в центре Воскепара, на площади. Это наиболее важное место в деревне: там находятся палата искусств и сельсовет. Последний полностью взял на себя финансовую сторону дела.

«Работа не была долгой и изнурительной. Когда работаешь с удовольствием, особенно если это твоя мечта, то дело идет в гору», - говорит Степанян. И вскоре после окончания работы, 18 декабря, памятник привезли в деревню. И нельзя оставить без внимания то усердие, с которым помогали жители деревни, некоторые - со слезами на глазах. «Камни очень большие, потрачено было много усилий, чтобы правильно их поставить, чтобы вдруг ничего не сломалось», - рассказывает Г. Степанян.

Так осуществилась большая мечта не только скульптора, но и всех жителей деревни Воскепар. А величественный, гордый орел будет напоминать многим поколениям о храбрых воинах нашего народа.

**Анна МАРКОСЯН.**

## Дух Пушкина витал...



В ноябре минувшего года завершились работы по переносу с Семеновского перевала

памятника в честь исторически грустного события - встречи А. Пушкина с арбой с телом А. Грибоедова - поближе к месту, к селу Гергер, где эта встреча состоялась. Осуществилась давняя мечта А. Попова («Друзья России»), инициатора этой акции. Вернее, ее первая часть. Ибо из-за поздней осени было отложено торжественное открытие памятника на новом месте.

Церемония по инициативе посольства РФ в РА состоялась в воскресенье, 4 июня 2006 года, накануне 207-летия со дня рождения великого поэта, .

Уже с утра из столицы, а также из Армавира, Чаренцавана, Алаверди, Ванадзора, Дилижана и Гавара отправились в путь переполненные автобусы с участниками торжеств. Работники посольства, представители «Росзарубежцентра», консульства РФ в Гюмри, общества «Армения - Россия» (АОКС), общественных организаций «Россия» и «Гармония», учащиеся ереванской и степана-

ванской школ, носящих имя великого поэта, студенты РАУ и Гаварского университета, актерский курс режиссера А. Григоряна. И еще большая группа артистов - певцов и чтецов.

Памятник с барельефом и журчащим родником расположен высоко на холме, к нему с трассы слева и справа ведут широкие ступени. Под жарким солнцем над простором ущелья в этот день звучали не менее жаркие речи, вдохновенные строки поэта, романсы и дуэты на тексты его гениальных творений. Особенно приятно порадовали школьники, продемонстрировавшие хорошее знание русского языка. В награду они получили книги.

«Дух Пушкина витал над нами...» - не скрывали волнения собравшиеся. Эти слова как нельзя точно и образно передавали атмосферу праздника. И не только. Праздник - еще одно свидетельство давней дружбы двух братских народов.

**Ида КАРАПЕТЯН.**

## ФЕСТИВАЛЬ АБРИКОСА В СТОЛИЦЕ РОССИИ

В рамках Года Армении в России 9 июля в парке «Эрмитаж» состоится открытие Фестиваля Абрикоса. В рамках мероприятия россияне смогут отведать армянский абрикос, а также послушать концерт дудука. До конца 2006 года по программе Года

Армении в России в июле и августе в музее имени Пушкина в Москве будут организованы выставки, проведены дни армянского театра, в Санкт-Петербурге в рамках фестиваля «Белые ночи» выступят армянские деятели искусств и танцевальные группы.

В Государственном музее архитектуры имени А.В. Щусева 1-30 июня проводится выставка «Церкви Армении».

**По публикации Агавни АРУТЮНЯН.**

# Мы просто меняем одни печали на другие...



*Поиск богатой и безмятежной жизни для некоторых граждан страны обрывается единственно только эмиграцией за океан. Рассказов очевидцев или кинофильмов бывает достаточно, чтобы оборвать все нити и корни и сорваться с места. К сожалению, действительность часто бывает совершенно другой. Счастье и зажиточная жизнь с трудом даются эмигрантам, чужая страна так и остается чужой.*

*Предлагаем заметки математика Левона АТОЯНА, который около пяти лет прожил в США и вернулся в Армению. Это вовсе не страшилки, а быль. Просто он, в отличие от многих, осознал суровые реалии эмигрантской жизни.*

Еще в 1992 году, когда я впервые погостил несколько месяцев у брата, понял совершенно четко: жить в США я не буду. Это другая планета — чужая, и моей она никогда не станет. Дело даже не в том, смогу ли я заработать на жизнь, что само по себе совсем не просто. Вопрос в том, что невозможно жить тут с постоянным чувством гостя. С чувством второсортности, независимо от материального положения. Не говорю уже о ностальгии и тоске, которые отравляют душу постоянно. Почему же я поехал туда во второй раз? На целину, на «хопан». Трудно стало жить доценту Государственного университета в независимой Армении. Но как точно выразился Сергей Довлатов, мы просто меняем одни печали на другие. Стоит ли?

В отличие от многих соотечественников, приезжающих сюда, чтоб найти Эльдorado, я особых иллюзий не питал и достаточно четко представлял свои перспективы в смысле добывания средств для прокорма и жилья. Если очень повезет после нескольких месяцев тыкания туда-сюда, то можно и найти работенку у соотечественника за наличных от 3 до 5

долларов в час. Это около 600-800 в месяц. Если не платить за жилье и питание, то какой-то мизер можно и отложить за несколько месяцев. Но это в лучшем случае, так как обычно родственники или друзья, к кому вы приехали, скоро дают вам понять, что пора и честь знать. А это практически катастрофа, ведь за однокомнатную квартиру в Лос-Анджелесе надо выкладывать не меньше 600 долларов в месяц. Но и это не все. Проблема транспорта. Общественный не развит, расстояния огромные. Ежедневно просить кого-то, чтоб подвозил, невозможно. Стало быть, надо покупать машину. А это значительные расходы на бензин, паркинг и обязательную страховку — без этого нельзя. Если застучают — это штраф в 1500. Прибавьте к этому расходы на ремонт и штрафы за нарушения правил дорожного движения, избежать которых при всем желании в первые два года невозможно. А штрафы довольно высокие: проехал на красный — плати 250, пересек сплошную линию — плати 100, не застегнул ремень — 30-50, не там припарковался — от 30 до 100. А если, не дай Бог, поймают под градусом, так вообще в тюрьму посадят и плюс страшный штраф — 800-1500. Сколько же надо зарабатывать, чтобы кое-что отложить?

Найти здесь хорошую работу также сложно, как и в Армении. Работать вполсилы, то есть не выкладываясь полностью, невозможно. Хозяин бдит ежeminутно. Второго замечания может и не быть — уволит, не моргнув глазом. Осталось загадкой, как это они чувствуют. Если бы мы так же работали у себя, то, наверное, не пришлось бы искать удачи на чужбине.

